

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



Քաղաքացիական հավասարության և ինտեգրման  
պետական ռազմավարության 2017 թվականի գործնական  
պլանի կատարման հաշվետվություն

Հունվար  
2018 թվական

**Հաշտության և քաղաքացիական հավասարության  
հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ  
Հասցե. Թբիլիսի, 0114, Ինգորովա փ. № 7  
Հեռախոս. (+995 32) 2923299; (+995 32) 2922632**

Կայք-էջ. [www.smr.gov.ge](http://www.smr.gov.ge)

Էլ.-փոստ.: [elisolomidze@yahoo.com](mailto:elisolomidze@yahoo.com)

<b>Նախաբան.....</b>	<b>4</b>
1. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին.....	7
Աջակցություն փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին .....	8
Գենդերային մեյնստրիմինգ .....	11
Պետական վարչարարության, իրավապաշտպան մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար.....	17
Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար հավասար ընտրական միջավայրի ապահովում.....	24
Մեդիա և տեղեկատվության մատչելիություն.....	30
II. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում.....	35
Սոցիալական շարժունություն.....	35
Ենթակառույցի վերականգնում .....	39
III. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում.....	43
Բարձրագույն կրթության մատչելիության աճ.....	47
Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում.....	49
Աջակցություն պետական լեզվի ուսուցման բարելավմանը .....	54
IV. Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանման և հանդուրժողականության միջավայրի խրախուսում .....	57
V. Միջազգային պարտավորությունների կատարում.....	69

## Նախաբան

Հաշվետու ժամանակաընթացքում «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թթ. Գործնական պլանի»<sup>1</sup> արդյունավետ իրականացման նպատակով ստեղծված պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում իրականացվեցին բազմաթիվ նախագիծ/ծրագիր և միջոցառումներ, որոնք ծառայում էին հասարակական կյանքի բոլոր ոլորտներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության աճին/բարելավմանը, նրանց մշակույթին աջակցությանը, հանդուրժողական միջավայրի ապահովմանը և քաղաքացիական ինտեգրման գործընթացին օժանդակությանը:

Պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում տեղի ունեցան ընդլայնված նիստեր, արտագնա հանդիպումներ, ինչպես նաև թեմատիկ աշխատանքային խմբի հանդիպումներ Պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման և մայրենի լեզուների ուսուցման մատչելիության ապահովման ուղղությամբ, մշակվեցին առաջարկություններ և հանձնարարականներ:

Հանձնաժողովում ներկայացված համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցությամբ, պատրաստվեց 2016 թվականին իրականացված գործունեության հաշվետվությունը և 2017 թվականի գործնական պլանը: Պատրաստված փաստաթղթերը ներկայացվեցին կառավարությանը, ինչպես նաև ժողովրդական պաշտպանին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդին և քաղաքացիական սեկտորին:

Այդպիսով, 2017 թվականի ընթացքում շարունակվեց քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության իմպլեմենտացիայի գործընթացը, պլանավորվեցին և իրականացվեցին կոնկրետ միջոցառումներ, որոնք ուղղված էին ռազմավարությամբ սահմանված առաջնահերթ նպատակներին հասնելուն:

- ❖ Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին,
- ❖ Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում,
- ❖ Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում,
- ❖ Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի ապահովում:

---

<sup>1</sup> Հաստատվել է Վրաստանի կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 17-ի N°1740 կարգադրությամբ,

Պետական միջգերատեսչական հանձնաժողովը ներկայացված է հետևյալ կազմով.

- Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ,
- Վրաստանի կրթության և գիտության նախարարություն,
- ՀԻԻԱ ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն,
- ՀԻԻԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոց,
- Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարություն,
- Վրաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
- Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն,
- Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարություն,
- Վրաստանի արդարադատության նախարարություն,
- Վրաստանի ներքին գործերի նախարարություն,
- ՀԻԻԱ ներքին գործերի նախարարության ակադեմիա,
- Վրաստանի պատժակատարողական և պրոբացիայի նախարարություն,
- Վրաստանի գյուղատնտեսության նախարարություն,
- ՀԻԻԱ Դավիթ Ադմաշենեբելիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիա,
- Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան,
- Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետի վարչություն,
- Սամցխե-Ջավախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչություն,
- Կախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչություն,
- Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի Ժողովրդական ժողով,
- Ք.Բաթումի քաղաքապետարան,
- Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողով,
- Վրաստանի հանրային հեռարձակում,
- Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմ:

2017 թվականին պետական միջգերատեսչական հանձնաժողովի կազմը նորացվեց և ավելացան հետևյալ գերատեսչությունները.

- Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն,
- ՀԻԻԱ Վրաստանի գրոսաշրջության ազգային վարչություն,
- ՀԻԻԱ տեղեկատվական կենտրոն ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին,
- Վրաստանի վիճակագրության ազգային ծառայություն,

- Վրաստանի բռնագրավված տարածքներից հարկադրաբար տեղաշարժված անձանց, վերաբնակեցվածների և տարհանվածների նախարարություն:

Սույն հաշվետվությունը արտացոլում է պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում 2017 թվականի գործնական պլանով իրականացված միջոցառումները:

## **I. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին**

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների երկրի քաղաքական կյանքին ընդգրկվածության ապահովումը պետական քաղաքականության նպատակն է, ինչը իր հերթին նկատառում է նրանց ներկայացուցչության բարելավումը ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակով:

Վերոնշյալ ռազմավարական նպատակի շրջանակներում հիշատակված խնդիրները կատարելու համար տարբեր պետական կառույցներ իրականացրեցին նախագծեր և միջոցառումներ: Այս ուղղությամբ նշանակալից էր Վրաստանի Արդարադատության նախարարության, Ներքին գործերի, Պատժակատարողական և պրոբացիայի, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Վրաստանի հանրային հեռարձակման, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև Էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետերի վարչությունների կողմից իրականացված գործունեությունը:

## **Աջակցություն փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին**

### **Գնչուների գրանցում**

Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը և նրանց լիարժեք ինտեգրմանը աջակցությունը քաղաքացիական ինտեգրման քաղաքականության գերագույն խնդիրն է: Նրանց ընդգրկվածությունը ամրապնդելու նպատակով պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում ստեղծվել է փոքրաթիվ և խոցելի էթնիկ խմբերի հիմնախնդիրները ուսումնասիրող աշխատանքային խումբ, որը մշակում է կոնկրետ հանձնարարականներ և միջոցառումներ:

2017 թվականի ողջ ընթացքում Արդարադատության նախարարությունը շարունակեց գնչուների հաշվառման գործընթացը: Անցկացվեցին համապատասխան ընթացակարգեր ծննդյան գրանցման, քաղաքացիության, նաև Ինքնությունը հաստատող վկայական ստանալու հետ կապված հարցերի կարգավորման նպատակով: Մասնավորապես, «Քաղաքացիություն չունեցող անձանց թվի կրճատում և քաղաքացիություն չունենալու կանխում Վրաստանում»<sup>2</sup> նախագծի շրջանակներում գնչուների համայնքի 3 ներկայացուցչի ապահովվեց ինքնության տվյալների կարգավորումը և Անձը հաստատող վկայագրեր ստանալը:

**Գնչուների գրանցման մասին 2011-2017 թվականների վիճակագրական տվյալներ**

Գործավարության կարգ	2011-2017
Վրաստանի քաղաքացիություն ստանալ	1
Վրաստանի քաղաքացիության որոշում (ID քարտ)	16
Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշում	17
Ծննդյան փաստի որոշում/գրանցում	39
<b>Ընդամենը</b>	<b>73</b>

**Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետի վարչության** կազմակերպմամբ անվճար անցկացվեցին տարածաշրջանում բնակվող ասորի և գնչու քաղաքացիների բժշկական հետազոտություններ:

**Վրաստանի կրթության և գիտության նախարարության գործունեություն.**

Հաշվետու ժամանակաշրջանում առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց Վրաստանում բնակվող գնչուական համայնքի ընդգրկվածության ապահովմանը: «Սոցիալական ներառման

<sup>2</sup> Նախագիծն իրականացվում է «Նորացումների և բարեփոխումների կենտրոն» ոչկառավարական կազմակերպության կողմից ՄԱԿ-ի Փախստականների Գերագույն կոմիսարի (UNHCR) ֆինանսական աջակցությամբ և Վրաստանի Արդարադատության նախարարության ՀԻԻԱ «Պետական սերվիսների զարգացման գործակալության» հետ համագործակցությամբ:

(ինկլուզիայի) աջակցության ենթածրագրի» շրջանակներում իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր ներառման սկզբունքներին հիմնված ակտիվություններով գնչուների նկատմամբ ստեղծել բարյացակամ միջավայր, բարձրացնել պետական լեզվի իմացության մակարդակը, աջակցել կրթական տարածությունում գնչուների ընդգրկվածությանը, որի արդյունքում Վրաստանի հանրակրթական հաստատություններում սովորում է 200-ից ավելի գնչու պատանի:

Ենթածրագրի շրջանակներում պլանավորվեց ստեղծել ընթերցանության և թատերական ակումբներ, պատրաստվեցին ներկայացումներ և կոնֆերանսային շնորհանդեսներ գնչուների մշակույթի և ինքնության մասին: Քաղաքացիական գիտակցության բարձրացման և սոցիալացման նպատակով իրականացվեցին բազում նախագծեր<sup>3</sup>, որոնց արդյունքում աշխատանքի անցավ 3 գնչու: Ոչձևական կրթության ճանապարհով օժանդակություն ցուցաբերվեց կրթական միջավայրում դպրոցական տարիքի գնչուների ընդգրկմանը:

2017 թվականի ընթացքում շարունակվեց փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մայրենի լեզուների ուսուցումը (օսերեն, չեչներեն, ավարերեն, ուդիերեն, ասորերեն),

**Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի Ժողովրդական Ժողովում** գործում է Մերձբալթյան երկրների (մասնավորապես Լիտվայի) կիրակնօրյա դպրոց, որտեղ 2017 թվականի դեկտեմբերից ցանկացողները հնարավորություն ունեն սովորել լատվիական լեզուն (15 ունկնդիր):

## Գենդերային մեյնստրիմինգ

2017 թվականին, տարվա ընթացքում պետական միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունում ընդգրկված պետական հիմնարկությունները շարունակեցին կոնկրետ միջոցառումների և նախագծերի իրականացումը, որոնք նպատակաուղղված են գենդերային նշանով անհավասարության վերացմանը, կանանց իրավունքների պաշտպանությանը, հասարակական կյանքին նրանց ակտիվ մասնակցության աջակցությանը և խրախուսմանը:

Հատկանշական է, որ Ստամբուլի համաձայնագրի վավերացման համար 2017 թվականի սկզբին Արդարադատության նախարարության կողմից նախ Վրաստանի կառավարությանը, այնուհետև Վրաստանի խորհրդարանին ներկայացվեց օրենսդրական փոփոխությունների փաթեթ: Փոփոխությունը վերաբերեց շուրջ 25 օրենսդրական ակտի:

Արդարադատության նախարարությունը օրենսդրական փաթեթի նախաձեռնմանը զուգահեռաբար, 2017 թվականի սկզբից ձեռնարկեց **#Գործիր**՝ սոցիալական ընթացակարգը: Ընթացակարգի

<sup>3</sup> «Մատչելի միջավայր հավասար հնարավորությունների համար», «Բովանդակալից անցկացնենք ազատ ժամանակը»:



նպատակն է հասարակությանը իրազեկել և բռնության դեմ ակտիվացնել: Ընթացակարգի նպատակներին հասնելու համար բացահայտվեց կնոջ նկատմամբ և ընտանիքում բռնության դեմ գործող իրավական միջոցների մասին վարժանքների անցկացման անհրաժեշտությունը: Վարժանքներ պլանավորվեցին Վրաստանի մասշտաբով (67 վայրերում) բոլոր այն քաղաքներում և գյուղերում, որտեղ գործում են Արդարադատության տներ (18) կամ Հասարակական կենտրոններ (48)<sup>4</sup>:

Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 15-ն ընկած ժամանակամիջոցում, հատուկ պատրաստված ուսումնական մոդուլի կիրառմամբ, վարժանք անցկացվեց 78 խմբերի համար, որին մասնակցեց 886 շահառու: Վարժանք անցկացվեց 48 հասարակական կենտրոնում (418 մասնակից):

Մատչելիության ապահովման և ընդունելության ավելացման նպատակով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող քաղաքներում և գյուղերում վարժանքն անցկացվեց տարբերվող ձևաչափով: Ուսումնական մոդուլը թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Վարժանքը ադրբեջանալեզու բնակչության համար անցկացվեց Մառնեուլիում, Կարալում, Իորմուղանլոյում և Սադախլոյում, իսկ հայալեզու բնակչության համար՝ Ախալցխիսեում, Բարալեթում, Գումբուրդոյում և Փոկայում:

Բացի դրանից, Վրաստանի Արդարադատության նախարարության և Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության ներկայացուցիչները „TOT“ (վարժանքներ մարզիչների համար) վարժանքներ անցկացրեցին Նինոծմինդայի, Ախալքալաքի և Ախալցխիսեի շրջաններից էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդների համար: Վարժանքի թեման էր գենդերային հավասարությունը և կնոջ նկատմամբ բռնությունը:

**Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը** իրականացրեց գենդերային հավասարության հարցերի նկատմամբ գիտակցության բարձրացման ընթացակարգ: Անցկացվեցին հանդիպումներ, որտեղ ուշադրությունը կենտրոնացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց իրավունքների պաշտպանության, նրանց կարիքների սահմանման և առկա հիմնախնդիրների լուծման ուղիների որոնման վրա:

Պետական նախարարի աշխատակազմը, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման աջակցության ծրագրի» համատեղ նախաձեռնության շրջանակներում, մարդկանց վաճառքի (թրեֆիկինգի) զոհերի, տուժածների պաշտպանության և օգնության պետական հիմնադրամի ու Վրաստանի Արդարադատության նախարարության հետ գործընկերությամբ

---

<sup>4</sup> Վարժանքների անցկացման ժամանակ բացվեց 4 հասարակական կենտրոն (Զեյնդարի, Կոխնարի, Մեորե Սվիրի, Բակուրիանի), որոնք վարժանքների կարգացուցակին ավելացան հոկտեմբեր ամսվա կեսերին:

իրականացրեց նախագիծ «Երիտասարդները գենդերային հավասարության համար»: Նախագծի նպատակը ներկայացնում էր քաղաքացիական գիտակցության բարձրացումը վաղ հասակի ամուսնության հետևանքների և ընտանիքում բռնության մասին: Առաջին փուլում, կամավոր հասակակից լուսավորիչները Քվեմո Քարթլիի, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանների 61 գյուղերում անցկացրեցին 103 հանդիպում ընտանիքում բռնության թեմայով: Իսկ նախագծի երկրորդ փուլում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջանների 33 գյուղերում կայացավ 66 հանդիպում վաղ ամուսնության թեմայով: Հանդիպումներ անցկացվեցին տարբեր թիրախային խմբերի՝ աշակերտների, ուսուցիչների, ծնողների, համայնքի լիդերների հետ: Հատկանշական է, որ հանդիպումներն անցկացվեցին պետական լեզվով, անհրաժեշտության դեպքում որպես օժանդակ լեզու կիրառվում էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մայրենի լեզուն:

**Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից, ՀԻԲԱ մարդու վաճառքի (թրեֆիկինգի) զոհերի, տուժածների պաշտպանության և օգնության պետական հիմնադրամի՝ «Վրաստանում՝ ընտանիքում բռնության կրճատում»** նախագծի շրջանակներում վրացերեն, ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով պատրաստվեցին բրոշյուրներ (5000 օրինակ), ստիկեր (300 օրինակ) և օրացույց (300 հատ), որոնց վրա տեղադրված էր բռնության դեմ հաղորդագրություն և թեժ գծի հեռախոսահամարը (116 006): Պատրաստված նյութերը, Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի, տեղական մունիցիպալիտետների և ՀԻԲԱ սոցիալական ծառայության գործակալության տարածքային միավորների հետ համագորակցությամբ տարածվեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում:

Վրաստանի Աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարությունը ՄԱԿ-ի կանանց կազմակերպության (UN WOMEN) աջակցությամբ ապահովեց բռնությունից պաշտպանության խորհրդատվական թեժ գծի (116 006) նյութա-տեխնիկական բազայի բարելավումը: Թեժ գծի միջոցով հնարավոր է խորհրդատվություն ստանալ ընտանիքում բռնության, կանանց նկատմամբ բռնության, մարդանց վաճառքի (թրեֆիկինգի) և սեռական բռնության հարցերի մասին: Թեժ գծի մատչելիությունը, բացի վրաց լեզվից, ապահովված է լրացուցիչ 7 (անգլերեն, ռուսերեն, թուրքերեն, ադրբեջաներեն, հայերեն, արաբերեն և պարսկերեն) լեզուներով:

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարը հանդիպեց էթնիկ ադրբեջանցի, հայ և վրացի մանկավարժ կանանց հետ, ովքեր Քվեմո Քարթլիի տարածաշրջանի ոչվրացալեզու դպրոցներում դասավանդում են պետական լեզու: Հանդիպմանը տեղի ունեցավ բանավեճ կանանց ընդգրկվածության նշանակության, հանդիպման մասնակիցների աշխատանքի առանձնահատկության, մարտահրավերների և հաջողությունների մասին:

**Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի Ժողովրդական ժողովին կից գործող ՀԻԲԱ «Կանանց իրավունքների համայնքային նախաձեռնությունը»** անցկացրեց վարժանք գենդերային հավասարության հարցերի մասին:

**ՀԻԲԱ Դավիթ Ադմաշենեբելիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիան** աջակցում է գենդերային հավասարության և կանանց խաղաղության և անվտանգության սկզբունքների ինտեգրմանը, ինչը իրականացվում է ՄԱԿ-ի կանանց կազմակերպության և կանանց տեղեկատվական կենտրոնի աջակցությամբ: Ազգային պաշտպանության ակադեմիայի ինչպես բակալավրային, այնպես էլ կարիերային դպրոցների ուսումնական պլանի համաձայն դպրոցներ ընդունված բոլոր նոր հոսքերին, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին ուսուցումներ են անցկացվում «Գենդերային հավասարության սկզբունքները և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը» թեմայով:

2017 թվականին, տարվա ընթացքում գենդերային հավասարության սկզբունքների գնահատման մասին դասախոսություն անցկացվեց IV կուրսի 84 յունկերի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Իսկ 2016-2017 ուսումնական տարում անցկացվեց երկժամյա վարժանք «Գենդերային հավասարության սկզբունքների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի» մասին:

**Քվեմո Քարթլիի տարածաշրջանում** ակտիվ գործունեությունը շարունակեցին «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թթ. գործնական պլանի» շրջանակներում ստեղծված «Կանանց սենյակներ»-ը: Վերոնշյալ մունիցիպալային ծառայությունը գործում է տարածաշրջանի բոլոր յոթ մունիցիպալիտետում, որի նպատակն է կանանց համար ապահովել հետաքրքիր, անհրաժեշտ տեղեկատվության և սպասարկման մատչելիությունը, ինչը իր հերթին նրանց ընդգրկվածության մատչելիության կարևորագույն նախապայմանն է:

Տարածաշրջանի մասշտաբով «Կանանց սենյակներ»-ի շրջանակներում, տարվա ընթացքում տեղի ունեցավ 168 հանդիպում այնպիսի նշանակալից թեմաներով, ինչպիսիք են. վաղ ամուսնությունը, ընտանիքում բռնությունը, գենդերային հավասարությունը և այլն:

- Անցկացվեցին տարբեր վարժանք-դասընթացներ. Մարդու իրավունքների պաշտպանություն, փոքր և միկրո բիզնեսի զարգացում, հաղորդակցություն, լիդերություն, բիզնեսի զարգացում և այլն, որոնց ակտիվորեն ընդգրկված էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանայք:
- «Կանանց սենյակներ»-ի գործունեության շրջանակներում անվճար բժշկական հետազոտություններից և խորհրդատվություններից օգտվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ շուրջ 400 կին,
- «Արտադրիչ Վրաստանում» ծրագրին գրանցվեց 19 կին (Մառնեուլի՝ 10, Թեթրիձղարո՝ 5, Ծալկա՝ 4):

**Մամջիսե-Ջավախեթի տարածաշրջանի** բոլոր մունիցիպալիտետներում գործում են «Կանանց սենյակներ», որոնց նախաձեռնությամբ և մունիցիպալիտետների աջակցությամբ իրականացվեցին տարբեր միջոցառումներ կանանց ակտիվության մեծացման և գենդերային հավասարության ուղղությամբ: Կազմակերպվեցին հանդիպումներ ֆերմեր կանանց, ձեռներեց կանանց հետ, ինչպես նաև անցկացվեցին վարժանքներ տարագիրներին վերինտեգրման ծրագրին ծանոթացնելու, սկրինինգ ծրագրի, ընտանեկան բռնության, թրեֆիկինգի, վաղ ամուսնության կանխման, կանանց քաղաքական ակտիվության մեծացման և լիդերության ունակություն-սովորությունների զարգացման հարցերի շուրջ,

«Խաղաղության կորպուսի» ներկայացուցիչների օգնությամբ «Կանանց սենյակներին» կից գործում են անգլերեն լեզվի ուսուցման դասընթացներ:

Տարվա ընթացքում «Կանանց սենյակները» ակտիվորեն ընդգրկված էին գենդերի հարցերով աշխատող տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվող ակտիվություններին, որոնցից հատկանշական են MERSY CORPS, IOM ֆերմեր կանանց ասոցիացիան, «Կինը և զարգացումը» ասոցիացիան, «Հակամարտությունների և բանակցությունների միջազգային հետազոտական կենտրոնը», «Տեղեկատվություն կանանց և ոչ կանանց համար» տեղեկատվական կենտրոնը, USAID, Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի գենդերային հավասարության դեպարտամենտը և այլն:

Վրաստանի խորհրդարանի գենդերային հավասարության խորհրդի կազմակերպմամբ Ախալցխիսեում տեղի ունեցավ կոնֆերանս «Վրաստանում հավասար հնարավորությունների ուժեղացում» թեմայով, որին մասնակցում էին տարբեր տարածաշրջանների ներկայացուցիչներ: Հատկանշական է նաև այն, որ մունիցիպալիտետները 2018 թվականի բյուջեում ի նկատի առան «Կանանց սենյակների» միջոցառումների ֆինանսավորման բաղադրիչը:

2017 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների և գյուղերում բնակվող քաղաքացիների քաղաքացիական ընդգրկվածության ամրապնդման նպատակով ձևակերպվեց Հուշագիր պետական լիազոր-նահանգապետի վարչության և ոչկառավարական կազմակերպություն «ՀԷԿՍ/ԷՊԵՐՍ»-ի և «Մերսի կորփսի» միջև, **Կախեթի տարածաշրջանի** մունիցիպալիտետներում մունիցիպալային «Կանանց սենյակ» սերվիսը արմատավորելու մասին:

**Կախեթի երկրամասային վարչության նախաձեռնությամբ** Կաբալի հասարակական կենտրոնում անցկացվեց վարժանք՝ գենդեր, բազմերանգություն – կարծրատիպեր, էթնոցենտրիզմ և ինքնություն թեմայով: Հանդիպումն իրականացվեց Կաբալի երիտասարդական կենտրոնի ծրագրի շրջանակներում: Վարժանքին ներկա էին վրացի և ադրբեջանցի երիտասարդներ (40 մասնակից):

## Պետական վարչարարության, իրավապաշտպան մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

### Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների ընդգրկվածության բարելավում

Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների զբաղվածության հեռանկարի բարելավման և վերջին հաշվով նրանց ընդգրկվածության և քաղաքացիական ինտեգրման գործընթացին աջակցության նպատակով պետական նախարարի աշխատակազմը, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի հետ համագործակցությամբ, իրականացրեց ստաժավորման պիլոտային ծրագիր «Վրաց լեզվից նախապատրաստության կրթական (1+4)» ծրագրից օգտվող անձանց համար: Ծրագրի շրջանակներում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդները մրցույթի հիման վրա ընդգրկվեցին ստաժավորման գործընթացին: Հատուկ ստեղծված հանձնաժողովը ապահովեց ստաժավորման ընտրությունը գնահատման սահմանված չափորոշիչներով: «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության ու 2015-2020 թթ. գործնական պլանի» արդյունավետ իրականացման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի անդամ հաստատությունների բարի կամքի հիման վրա, 65 առաջադեմ ապլիկանտ եռամսյա ստաժավորում անցավ 20 գերատեսչությունում, այդ թվում հանրային կառույցներում, տեղական ինքնակառավարման մարմիններում և հանրային իրավունքի իրավաբանական անձերում:

Պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, 2017 թվականի դեկտեմբերին փոփոխություն մտցվեց «Հանրային հիմնարկությունում ստաժավորում անցնելու կարգի և պայմանների մասին պետական ծրագրի հաստատման վերաբերյալ» Վրաստանի կառավարության 2014 թվականի հունիսի 18-ի թիվ 410 որոշման մեջ: Մասնավորապես, սահմանվեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հանրային հիմնարկություններում ստաժավորում անցնելու ընթացակարգերը: Իրականացված փոփոխությունների համաձայն, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողներին, ովքեր անցել են «Վրաց լեզվից պատրաստության հատուկ կրթական ծրագիրը», հնարավորություն կտրվի հանրային կառույցներում ստաժավորում անցնելու ճանապարհով ձեռք բերել պատշաճ փորձ և զարգացնել մասնագիտական ունակություն-սովորությունները, ինչը կօժանդակի երիտասարդների ընդգրկվածությանը և քաղաքացիական ինտեգրմանը:

Էթնիկ փոքրամասնությունների 5 ներկայացուցչի (հայ, ռուս, ադրբեջանցի, ուկրաինացի, ասորացի) հնարավորություն տրվեց անցնելու 3-ամսյա ստաժավորում **ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի ժողովրդական ժողովում:**

2017 թվականի ընթացքում **Մամջիսե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետի** վարչությունում և մունիցիպալիտետներում էթնիկ փոքրամասնությունների

ներկայացուցիչների դիմումներին արձագանքը տեղի էր ունենում օրենքով սահմանված ընթացակարգերի պաշտպանությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում նահանգապետի վարչությանը օգնության/խորհրդատվության նպատակով դիմել է 425 քաղաքացի, այստեղից 138 էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ: Քաղաքացիների խնդրանքը վերաբերում էր հողերի և բնակելի տարածքների սեփականաշնորհման, բնակելի տների վերանորոգման աշխատանքներին ֆինանսական օգնության, հարևանների վեճերի և այլ հարցերին: Փայտանյութի հատկացման վերաբերյալ թույլտվություն տրվեց էթնիկ փոքրամասնությունների 167 ներկայացուցիչ:

Երկրամասի վարչությունում և մունիցիպալիտետներում գործում է «Մեկ պատուհանի սկզբունքը»: Անհրաժեշտության դեպքում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հանդիպում են համապատասխան ծառայությունների աշխատակիցներին: Վարչությունում նաև գործում է աշխատանքային խումբ, որը ուսումնասիրում և հանձնարարականներ է ներկայացնում Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությանը Սամցխե-Ջավախեթում պետական սեփականության մեջ գոյություն ունեցող անշարժ/շարժական գույքի տնօրինության հետ կապված հարցերի մասին: Աշխատանքային խմբի կողմից քննարկվեց 212 ֆիզիկական անձի դիմում, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների 58 ներկայացուցիչ, որոնցից բավարարվեց 45-ի պահանջը:

Կարևոր է նշել, որ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ քաղաքացիներին չեն ստեղծվել խոչընդոտներ լեզվական պատնեշի պատճառով, անհրաժեշտության դեպքում տեղեկատվության մատուցումը իրականացվում էր նրանց հասկանալի լեզուներով: Իսկ տեղական ինքնակառավարման գործունեությունում ընդգրկված էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ հանրային աստիճանավորներին, անհրաժեշտության դեպքում տրվում էին համապատասխան բանավոր պարզաբանումներ մայրենի կամ նրանց հասկանալի լեզուներով:

2017 թվականին ակտիվ աշխատանք էր ընթանում Սամցխե-Ջավախեթի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության 2018-2021 թվականների գործնական պլանի մշակման նպատակով: Համապատասխան թեմատիկ աշխատանքային խմբերում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների առավելագույն ընդգրկումն ապահովում էր հայալեզու թարգմանիչը:

«Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և համապատասխան գործնական պլանի» շրջանակներում 2016 թվականի սեպտեմբերի 6-ին, նահանգապետի թիվ 61 կարգադրության հիման վրա, **Քվեմո Քարթլիի տարածաշրջանում** ստեղծվեց էթնիկ փոքրամասնությունների հիմնադրույթների մասին խորհրդակցական խորհուրդ: Հաշվետու ժամանակաշրջանում նշված խորհրդի հովանավորությամբ տարածաշրջանում անցկացվեց 6 նիստ: Նիստերին մասնակցում էին տեղական ինքնակառավարման, ոչկառավարական սեկտորի, մեդիայի, կենտրոնական իշխանության, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Նիստերի ժամանակ քննարկվել են այնպիսի

հարցեր, ինչպիսիք են խմելու և ոռոգելի ջրով ապահովումը, դրսի լուսավորությունը, նախադպրոցական հիմնարկությունների կարիքը, գյուղերում բնակվող կանանց զբաղվածությունը, տնտեսական ուժեղացումը, պետական լեզվի ուսուցման մատչելիությունը, կանանց քաղաքական ընդգրկվածությունը որոշումների ընդունման գործընթացներում և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում **Կախերթի տարածաշրջանում** տեղի ունեցավ էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական ընդգրկվածության բարելավման խորհրդի երկու նիստ: Նշված խորհրդի նպատակն է տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական ընդգրկվածության բարելավումը, նրանց հետաքրքրությունների նկատառումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող նախագծերի, ծրագրերի, սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված հարցերը քննարկելիս և այլն: Տեղական և կենտրոնական իշխանության, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները քննարկեցին տարածաշրջանում քաղաքացիական ինտեգրման գործընթացում գոյություն ունեցող մարտահրավերները (ենթակառուցային հիմնախնդիրներ, պետական լեզվի ուսուցում, սոցիալական օգնություն և այլն) և դատողություն արեցին այս ուղղությամբ պլանավորված կոնկրետ գործողությունների մասին:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ակտիվ գործունեությունը շարունակեց **ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի ժողովրդական ժողովին կից** գործող էթնիկ փոքրամասնությունների խորհուրդը: Ինտենսիվ ռեժիմով էին ընթանում խորհրդի նիստերը, որտեղ քննարկվում էին տարբեր հիմնադրույթային հարցեր դրանք կարգավորելու նպատակով: Խորհուրդը ակտիվորեն համագործակցում էր ք.Թբիլիսիի քաղաքապետարանի, ժողովրդական ժողովի և Թբիլիսիի մունիցիպալիտետի վարչությունների հետ:

**Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերով նախարարությունը** երիտասարդական գործունեության զարգացմանը աջակցության ծրագրի շրջանակներում իրականացրեց «Երիտասարդության բարօրության աճի և զարգացման աջակցության նախագիծ՝ տեղական ինքնակառավարություններում երիտասարդական ծառայությունների ամրապնդման ճանապարհով»<sup>5</sup>: Նախագծի նպատակը ներկայացնում էր մունիցիպալիտետների տեղական ինքնակառավարման երիտասարդական ծառայությունների հզորացումը, ինչն իր հերթին կօժանդակի հասարակական կյանքում երիտասարդների ընդգրկվածության աճին և մունիցիպալային մակարդակով երիտասարդական քաղաքականության փաստաթղթի ստեղծմանը:

Նախագծի շրջանակներում, տեղական ինքնակառավարման մարմիններում (քաղաքապետարան, վարչություն) վերապատրաստություն անցավ երիտասարդության հարցերով պատասխանատու 75 անձ: Շարունակվում է պիլոտային խմբի հետ (21 մունիցիպալիտետ) մունիցիպալային

<sup>5</sup> Նախագիծն իրականացվեց միջազգային կազմակերպություններ WORLD VISION-Վրաստանի և USAID-ի «Աճ» նախագծի ֆինանսական աջակցությամբ:

երիտասարդական համակարգողի աշխատանքի նկարագրության մասնագիտական չափանիշի և պատրաստության ծրագրի արմատավորման/գնահատման գործընթացը:

### **Հասարակական սերվիսների մատչելիության բարելավումը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար**

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում պետական նախարարի աշխատակազմի անմիջական ընդգրկմամբ և կազմակերպմամբ շարունակվեց տեղեկատվական/գիտակցության բարձրացման ընթացակարգը տարբեր հարցերի նկատմամբ: Մասնավորապես.

- ❖ Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման, ինչպես նաև գյուղատնտեսության նախարարությունների ներկայացուցիչների հետ համատեղ անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ և բանավեճեր Եվրաինտեգրման գործընթացի վերաբերյալ, մասնավորապես. Անայցեգրային պայմանակարգի, Եվրամիության հետ ազատ առևտրի տեսանկյունից գյուղատնտեսության այն հնարավորությունների, առավելությունների և հեռանկարների մասին, ինչը բխում է Եվրամիության հետ խոր և համապարփակ առևտրական պայմանագրից (Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի, Կախեթի): Հանդիպումներին ներկա էին տեղական ինքնակառավարությունների, ոչկառավարական կազմակերպությունների, մեդիայի ներկայացուցիչներ, ֆերմերներ և ձեռներեցներ: Հանդիպումների ժամանակ ուշադրությունը կենտրոնացվեց նաև ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագրի վրա:
- ❖ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին տեղեկատվական ընթացակարգի ուղղությամբ կարևոր էր «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի իրականացումը: Նախագծի նպատակը ներկայացնում էր Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին և Եվրամիությանը ինտեգրման գործընթացի մասին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) տեղեկատվության մատչելիությունը նրանց հասկանալի լեզուներով: Նախագծի շրջանակներում, երիտասարդներից բաղկացած շարժուն խմբերը, որոնք անցան հատուկ նրանց համար պլանավորված թեմատիկ դպրոց, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանների 5 գյուղերում անցկացրեցին 8 տեղեկատվական հանդիպում, տարածվեցին համապատասխան նյութեր<sup>6</sup>:

<sup>6</sup> Նախագիծն իրականացվեց ՀԻԲԱ «ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի» և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման աջակցության ծրագրի» (PITA) կողմից, Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի



Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով պատրաստվեցին և տարածվեցին նյութեր անայցեգրային պայմանակարգի մասին:

**Պատժակատարողական և պրոբացիայի նախարարության** բոլոր տասնհինգ քրեակատարողական հիմնարկությունում մատչելի են հինգ լեզվով (ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, թուրքերեն և անգլերեն) բրոշյուրները մեղադրյալ/դատապարտյալի իրավունքների մասին: Հաշվետու ժամանակաշրջանի համար տպագրվեցին տնային կալանքի և հանրօգուտ աշխատանքի մասին ցուցանակներ ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով:

**Վրաստանի Արդարադատության նախարարության** հասարակական կենտրոնների կարևոր գործառույթը սերվիսների մատչելիության հետ միասին ներկայացնում է գյուղական քաղաքացիական ընդգրկվածության խրախուսումը: Համապատասխանաբար, 2017 թվականի ընթացքում հասարակական կենտրոնների հանդիպումների սենյակներում անցկացվեցին տարբեր տեսակի տեղեկատվական, ճանաչողական և մշակութային միջոցառումներ, վարժանքներ և սեմինարներ, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների իրավունքների, գենդերային հավասարության, վաղ ամուսնության, կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության, գաղթի, թրեֆիկինգի, եվրոինտեգրման և անայցեգրային պայմանակարգի, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մասին: Նշված ժամանակաշրջանում վերը թվարկած հասարակական կենտրոններում անցկացված շուրջ 375 հանդիպումներին մասնակցեց մինչև 5300 մարդ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ք.Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից անցկացվեց հանդիպում համայնքների ներկայացուցիչների հետ: Նրանց մատուցվեց տեղեկատվություն սոցիալական սերվիսների և մունիցիպալային ծրագրերի մասին, ինչպես նաև համակարգվեցին էթնիկ փոքրամասնությունների հանդիպումները պետական հաստատությունների ներկայացուցիչների հետ:

## **Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար հավասար ընտրական միջավայրի ապահովում**

Հաշվետու ժամանակաշրջանում **Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը** (ԿԸՀ) ակտիվորեն շարունակում էր գործունեությունը: Իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

---

աշխատակազմի նախաձեռնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

## Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների իրազեկում

- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի ընտրությունների համար<sup>7</sup>, ԿԸՀ-ն պատրաստեց հատուկ տեսահոլովակ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մատչելի սերվիսների մասին, որը թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով,
- ❖ 2017 թվականի ընտրությունների համար պատրաստվեց 14 տեղեկատվական տեսահոլովակ, այդ թվում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով և տեղադրվեց տարածաշրջանային հեռուստատեսությունների էթերում,
- ❖ Հայալեզու «Վրաստան» թերթում և ադրբեջանալեզու «Գյուրջիստան» թերթում ընտրողների համար հրապարակվեց սերվիսների և քվեարկության օրը ձայն տալու ընթացակարգերի մասին մատչելի տեղեկատվություն,
- ❖ ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնում ընտրողները տեղեկատվություն ստանալ կարող էին հայալեզու և ադրբեջանալեզու օպերատորներից, որոնք ապահովում էին ընտրական հարցերի կապակցությամբ հետաքրքրվող անձանց իրազեկումը: Ձբաղված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 4 օպերատոր:

## Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների իրազեկումը քվեարկության օրվա ընթացակարգերի մասին

### Իրազեկման ընթացակարգ - «Զրուցում ենք ընտրողների հետ»

2017 թվականի ընտրությունների համար ընտրողների գիտակցության բարձրացման նպատակով, առաջին անգամ իրականացվեց նախագիծ՝ «Զրուցում ենք ընտրողների հետ»:

- ❖ Նախագծի առաջին փուլում հասարակական կուտակման տեղերում անցկացվեց 347 հանդիպում, իսկ 73 ընտրատարածքային հանձնաժողովներում՝ «Ընտրողի օր» խորագրով 103 հանրային հանդիպում:
- ❖ Նախագծի երկրորդ փուլը «Գտիր քո գլուխը՝ գտիր քո թաղամասը» իրականացվեց ընտրական ժամանակաշրջանում, որի շրջանակներում նույնպես ընտրողները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ<sup>8</sup> ընտրողների համընդհանուր ցուցակում իրականացրեցին սեփական տվյալների վերստուգում, ինչպես նաև նրանց բաժանվեցին

<sup>7</sup> Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ Ժողովրդական ժողովի և ինքնակառավարման քաղաքի/ինքնակառավարվող թեմի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 21-ի ընտրություններ:

<sup>8</sup> ԿԸՀ-ի կայք-էջ՝ voters.cec.gov.ge; Android և iOS օպերացիոն համակարգ, Արագ վճարման տերմինալներ՝ NOVA, TBC; պլանշետ:

տեղեկատվական բրոշյուրներ: ԿԸՀ-ի կողմից առաջարկված ծառայությունից օգտվեց 667 124 ընտրող:

- ❖ Նախագծի երրորդ փուլի՝ «Եկ ընտրությունների» ժամանակ տարածվեցին ընտրական ընթացակարգերն արտացոլող տեղեկատվական բրոշյուրներ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Հատկանշական է, որ նախագիծն իրականացվեց Վրաստանի զանգվածով մունիցիպալային կենտրոններում և գյուղերում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում:

2017 թվականին, ընտրական վարչությունը և ԿԸՀ-ին կից գործող ուսուցման կենտրոնը իրականացրեցին կարևոր **կրթական նախագծեր**: Մասնավորապես.

- ❖ **«Նախընտրական զարգացման դպրոց» նախագիծն** իրականացվեց 23 մունիցիպալիտետում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող 3 մունիցիպալիտետում: Նախագծի նպատակը ներկայացնում էր երիտասարդության շրջանում ընտրությունների ժողովրդականացումը, քաղաքացիական ընդգրկվածության աճը, ընտրատարածքային հանձնաժողովի անդամների համար մարզիչի ունակություն-սովորությունների զարգացումը և ընտրական վարչությունում կուտակված գիտելիքի փոխանակման ճանապարհով հավելյալ մարդկային ռեսուրսի ստեղծումը: Հատկանշական է, որ նախագիծը առաջին անգամ կիրառվեց Ախմետայում, Պանկիսի կիրճում բնակվող երիտասարդների համար: Նախագծին մասնակցեց 18-24 տարեկան 453 երիտասարդ:
- ❖ **«Ընտրություններ և երիտասարդ ընտրող» նախագիծն** իրականացվեց 68 մունիցիպալիտետի 93 հանրային դպրոցում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող մունիցիպալիտետներում: Նախագծի նպատակն էր ներկայացնում երիտասարդների շրջանում քաղաքացիական գիտակցության բարձրացումը և քաղաքացիական պատասխանատվության ավելացումը: Ուսումնական դասընթաց անցավ XI – XII դասարանների 1 645 աշակերտ:
- ❖ **«Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ» նախագիծն** իրականացվեց Վրաստանի մասշտաբով բոլոր մունիցիպալիտետներում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող մունիցիպալիտետներում: Նախագծի նպատակ էր ներկայացնում ընտրական հարցերի հետ կապված քաղաքացիական գիտակցության բարձրացումը և ընտրական վարչությունում որակյալ կադրային ռեսուրսի ձևավորման աջակցությունը: Ուսումնական դասընթաց անցավ 18 տարեկան հասակից սկսած 5 247 մասնակից:
- ❖ **«Ընտրական իրավական ճյուղում» ուսումնական դասընթացը** նպատակադրված էր ուսանողների կողմից ընտրական իրավունքից անհրաժեշտ մասնագիտական գիտելիքի խորացումը, այդ թվում գործնական ունակություն-սովորությունների զարգացման և քաղաքացիական գիտակցության բարձրացման աջակցությունը: Ուսուցումն

իրականացվեց 10 համալսարաններում և մասնակցեցին 426 ուսանողներ, այդ թվում Մամիկ-Չավախեթի պետական համալսարանի ուսանողները:

### **Ընտրական փաստաթղթերի թարգմանություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար**

Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի ընտրությունների գործընթացի<sup>9</sup> համար, հայալեզու և ադրբեջանալեզու ընտրողների համար թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ ընտրական փաստաթղթերը.

- ❖ Ընտրական քվեաթերթ (վրացերեն-հայերեն, վրացերեն-արբեջաներեն և վրացերեն հայերեն-ադրբեջաներեն լեզուներով), պատին փակցնելու ընտրական համընդհանուր ցուցակը և սեղանի և ընտրողի հուշաթերթիկը «Չայն տալու ընթացակարգերի արտացոլմամբ» (վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով),
- ❖ Հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեցին և տարածվեցին տարբեր լրատվական նյութեր,
- ❖ Հայերեն և ադրբեջաներեն լեզուներով առաջին անգամ թարգմանվեցին ԿԸՀ-ի հետևյալ որոշումները. «Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ Ժողովրդական ժողովի ընտրությունների համար ընտրողների նախաձեռնողական խմբի կողմից մեծամասնական թեկնածուի առաջադրման և գրանցման ընթացակարգերը նկարագրող հրահանգը» և «Մունիցիպալիտետի մարմինների ընտրության համար նախաձեռնողական խմբերի կողմից ներկայացված քաղաքապետի/ժողովրդական ժողովի անդամության մեծամասնական թեկնածուներին հերթական համար շնորհելու որոշ նախընտրական ընթացակարգերի սահմանման վերաբերյալ»<sup>10</sup>,
- ❖ Հայալեզու և ադրբեջանալեզու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ փաստաթղթերը. Ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների ուղեցույց հարահանգը, ընտրատեղամասային հանձնաժողովի նախագահի հուշաթերթի հրահանգը, ընտրողների հոսքը կարգավարող հանձնաժողովի անդամի գործառույթները, քվեարկության օրը ընտրատեղամասային հանձնաժողովի քարտուղարի իրավասությունները, ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթները, քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթները, փոխադրական քվեարկության տուփը ուղեկցող հանձնաժողովի անդամի գործառույթները:

<sup>9</sup>Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 ընտրությունների համար, 73 ընտրատարածքային հանձնաժողովի կողմից ստեղծվել էր 3 644 ընտրատեղամաս, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներով հոծ բնակվող 12 ընտրատարածքում՝ 345 ընտրատեղամաս: Այստեղից՝ վրաց-ադրբեջանական 208 տեղամաս, վրաց-հայկական՝ 133 տեղամաս և վրաց-հայ-ադրբեջանական՝ 4 տեղամաս: :

<sup>10</sup> ԿԸՀ-ի 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ 30/2017 և թիվ 31/2017 որոշումներ:

- ❖ Հայերեն և ադրբեջաներեն սուբտիտրեր պատրաստվեցին ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների ուսումնական ֆիլմի համար՝ «Քվեարկության օրվա ընթացակարգեր»:

**Փոքր դրամաշնորհներ քաղաքացիական կազմակերպություններին և էթնիկ փոքրամասնությունների համայնքներին – «Ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարտզություն անցկացնելու և ընտրական մշակույթը ուժեղացնելու նպատակով»**

Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի ընտրությունների համար ԿԸՀ-ի կողմից սահմանվեցին ֆինանսավորման դրամաշնորհային մրցույթի առաջնահերթային ուղղությունները: Ուղղություններից մեկը ներկայացնում էր խոցելի խմբերի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության աջակցությունը 2017 թվականի տեղական ինքնակառավարման ընտրությունների գործընթացին: Դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշման հիման վրա, ուսումնական կենտրոնը ֆինանսավորեց 8 տեղական ոչկառավարական կազմակերպության նախագիծ<sup>11</sup>: Նախագծերը լրիվությամբ ներառում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջանները: Նախագծերի ընդհանուր բյուջեն կազմեց 181 568 լարի:

**Էթնիկ փոքրամասնություններին պատկանող ընտրական վարչության անդամների նախապատրաստությունը ընտրական ընթացակարգերի կապակցությամբ**

Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի ընտրությունների համար, Վրաստանի զանգվածով, ընտրատեղամասային հանձնաժողովի 47259 անդամի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների 2 782 անդամի<sup>12</sup> անցկացվեցին վարժանքներ:

Ընտրատեղամասային հանձնաժողովների հայալեզու և ադրբեջանալեզու անդամները անցան ինտենսիվ ուսումնական դասընթաց: Վարժանքի I փուլում ընտրատեղամասային հանձնաժողովների անդամներին անցկացվեց հրահանգավորում ընտրատեղամասային հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրության կարգի կապակցությամբ: Վարժանքների II փուլը հատկացվեց ընտրատեղամասային հանձնաժողովների լրիվ կազմի ուսուցմանը, որի շրջանակներում քննարկվեցին մինչև քվեարկության օրը և քվեարկության օրը ընտրատեղամասային հանձնաժողովի իրավասությանը պատկանող հարցերը: Վարժանքների III փուլը հատկացվեց ընտրատեղամասային հանձնաժողովների ղեկավար անձանց (նախագահ,

<sup>11</sup> Ֆինանսավորած նախագծերի մասին հավելյալ լրատվությունը դիտեք [Հավելված 1](#)-ում:

<sup>12</sup> Այստեղից ադրբեջանցի՝ 1 374, հայեր՝ 1 368, ռուս՝ 19, ավարացի՝ 12, օս՝ 8, ուկրաինացի՝ 1:

տեղակալ, քարտուղար) ուսուցմանը: Վարժանքների IV փուլում ընտրատեղամասային հանձնաժողովի անդամներին անցկացվեց նմանակող ուսուցում քվեարկության օրվա դրվագների ներկայացման ձևաչափով:

Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց քաղաքական կուսակցությունների հետ աշխատանքին: Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը ակտիվորեն համագործակցում էր ոչկառավարական կազմակերպությունների հետ՝ «Նիդեռլանդների ինստիտուտը բազմակուսակցական ժողովրդավարության համար» – NIMD - (Netherlands Institution for Multiparty Democracy): ԵԱՀԿ-ի ազգային փոքրամասնությունների հարցերով Գերագույն կոմիսարի գրասենյակի աջակցությամբ, NIMD-ի հետ համագործակցության շրջանակներում, քաղաքական կուսակցությունների հետ անցկացվեցին հանդիպումներ և սեմինարներ:

## Մեղիա և տեղեկատվության մատչելիություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար գանգվածային լրատվության և տեղեկատվության մատչելիության բարելավում

Հաշվետու ժամանակաշրջանում *Հանրային հեռարձակումն* իրականացրեց 2017 թվականի գործնական պլանով սահմանված միջոցառումները:

### Հեռուստահաղորդում

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց Հանրային հեռարձակման լրատվական «Մոամբե» հաղորդման 18:00 և 20:00 ժամերի թողարկումների հեռարձակումը վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներ կրող ձայնային շավիղների ուղեկցությամբ: Նշված «Հասկանալի լեզվով լրատվության մատչելիության բարելավում էթնիկ փոքրամասնությունների համար» նախագիծը տարածաշրջանային հաղորդումների ասոցիացիայի և Հանրային հեռարձակման համատեղ նորույթն է, որն իրականացվում է ԱՄՆ-ի դեսպանության աջակցությամբ: Մինչև ընթացիկ տարվա հուլիսը եթերում հաղորդվում էին ամենօրյա թողարկումներ երեք լեզուներով (աբխազերեն՝ 23:00 ժամին, օսերեն՝ 23:30 ժամին, ռուսերեն՝ 00:00 ժամին (տևողությունը՝ 26 րոպե)):

**Վրաստանի պատժակատարողական և պրոբացիայի նախարարությունը**, լիմիտի տեխնիկապես հնարավորության շրջանակներում քրեակատարողական հիմնարկությունների մեղադրյալ/դատապարտյալներին ապահովում է բոլոր լեզուներով հետաքրքիր հեռուստատեսային

ալիքների մատչելիությունը: Բացի դրանից, նախարարությունն ապահովում է արբանյակային հեռարձակումների անվճար մատչելի հեռուստատեսային ալիքների միացումը:

Քրեակատարողական հիմնարկություններում հեռուստատեսային ալիքների հեռարձակումը իրականացվում է **20 օտար լեզուներով**. ռուսերեն (12 ալիք), անգլերեն (2 ալիք), թուրքերեն (2 ալիք), ադրբեջաներեն (2 ալիք), հայերեն (1 ալիք) և արաբերեն (1 ալիք):

Տարածաշրջանային հեռարձակումների ասոցիացիայի հետ համագործակցությամբ պետական նախարարի աշխատակազմը տեղական ինքնակառավարմանը, ոչկառավարական կազմակերպություններին, մեդիայի ներկայացուցիչներին, երիտասարդներին մատուցեց տեղեկատվություն տեղական ATV 12 և Փարվանա ալիքների թվանշանային տարածման մասին: Մոցիալապես անպաշտպան ընտանիքների մի մասին անվճար փոխանցվեցին թվանշանային հեռարձակման հատուկ սարքեր (Մեթ թոպ բոքսեր):

### **Ռադիոհաղորդում**

2017 թվականի ընթացքում եթերում ընթանում էր ամենաբազմաթիվ ռադիոհաղորդում «Մեր Վրաստանը» (տևողությունը՝ 40 րոպե): Հաղորդման թեմատիկան բազմաբղետ էր և պարունակում էր այնպիսի հարցեր, ինչպիսիք են. Քաղաքացիական ինտեգրման տեսակետից առկա բարդություններ, Վրաստանի էթնիկ և կրոնական բազմազանություն, տարբեր ազգությունների մշակույթը, գոյություն ունեցող մարտահրավերները, ավանդույթները և յուրահասկությունները:

Հայերեն և ադրբեջաներեն լեզուներով սինխրոն թարգմանված «Մոամբե»-ի թողարկումները ձայնագրվում էին ռադիոյի ստուդիայում և հաղորդվում էին Առաջին ռադիոյի եթերում, ինչպես նաև Ռադիո 2-ի եթերում շարունակվեց քրդերեն (տևողությունը՝ 25 րոպե) ամենաբազմաթիվ լրատվական-ճանաչողական-զվարճալի հաղորդումը:

### **Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրերի և էլեկտրոնային/տպագիր մեդիայի մատչելիության ապահովում**

2017 թվականի սեպտեմբերից Հանրային հեռարձակման հովանոցի ներքո գործարկվեց յոթ լեզուներով (վրացերեն, արբազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն, անգլերեն և ռուսերեն) կայք-պորտալը՝ [www.itv.ge](http://www.itv.ge), որի միջոցով օգտատերը հնարավորություն ունի ծանոթանալու համապատասխան լեզվով պատրաստված իրեն հետաքրքիր լրատվությանը, դիտել ռեպորտաժներ և սյուժեներ: Կայք-պլատֆորմի հիման վրա պլանավորված է համացանց-ռադիո-հեռուստատեսության ստեղծում:

## **Տպագիր մեդիա**

Տարվա ընթացքում պետության աջակցությամբ հրատարակվեց հայալեզու ամենշաբաթյա «Վրաստան» թերթը (102 համար, տիրաժ` 3500) և ադրբեջանալեզու ամենշաբաթյա «Գուրջիստան» թերթը (93 համար, տիրաժ` 2000): Լրագրերը տարածվեցին ինչպես Թբիլիսիում, այնպես էլ էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, պատժակատարողական և պրոբացիայի նախարարության հիմնարկություններում:

## **Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության ապահովում**

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի ներկայացուցիչները անցկացրեցին տեղեկատվական հանդիպումներ: Հանդիպումների ժամանակ, որոնց ներկա էին Քվեմո Քարթլիի, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանների տեղական ինքնակառավարման, ոչկառավարական կազմակերպությունների և մեդիայի ներկայացուցիչները, ինչպես նաև ուսանողներ, քննարկվեցին քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ 2016 թվականին իրականացված և 2017 թվականին պլանավորված միջոցառումները:

## **Գիտակցության բարձրացում թրեֆիկինգի դեմ պայքարի հարցերի մասին**

Մարդու վաճառքի (թրեֆիկինգի) դեմ պայքարը Վրաստանի իշխանության առաջնահերթ հարցերից մեկն է: Թրեֆիկինգի դեմ պայքարի պետական քաղաքականության կարևոր բաղադրիչներից մեկը ներկայացնում է կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: Այս տեսանկյունից, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում խոցելի խմբերին, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Հատկանշական է, որ 2017 թվականին Բարալեթ և Փոկա գյուղերում Վրաստանի Արդարադատության նախարարության ՀԻԻԱ արդարադատության ուսումնական կենտրոնի և ՀԻԻԱ հանցագործությունների կանխարգելման կենտրոնի մարզիչները թրեֆիկինգի թեմայով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ անցկացրեցին 2 տեղեկատվական հանդիպում (20 մասնակից):

## **Հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածում**



Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հասարակական սերվիսների մատչելիության աճի նպատակով, 2017 թվականի ընթացքում **Վրաստանի Արդարադատության նախարարությունը** ապահովում էր հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածումը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում: 2017 թվականի ընթացքում հասարակական կենտրոնների միջոցով տարածվեցին տեղեկատվական նյութեր հողի գրանցման պետական բարեփոխման մասին և Եվրամիություն անայցեգրային պայմանակարգի վերաբերյալ: Էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով պատրաստվեցին և հասարակական կենտրոնների միջոցով տարածվեցին տեղեկատվական նյութեր:

**Վրաստանի գյուղատնտեսության նախարարություն** կողմից հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական համայնատիրությունների զարգացման գործակալության կողմից Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջանների էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող մունիցիպալիտետներում, մեղվաբուծության և կաթի արտադրության գյուղատնտեսական համայնատիրությունների աջակցության պետական ծրագրի, ինչպես նաև բարձրալեռ տարածաշրջաններում պետական սեփականությունում գոյություն ունեցող արոտավայրերի ռացիոնալ կիրառման պետական ծրագրի շրջանակներում, 2017 թվականին անցկացվեց 8 տեղեկատվական հանդիպում, որին մասնակցում էին տեղական ֆերմերները, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

### **Էթնիկ փոքրամասնությունների գիտակցության բարձրացում մարդու իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների մասին**

**ՀԻԻԱ պատժակատարողական և պրոբացիայի ուսումնական կենտրոնում** ընթանում է նախարարության հատուկ քրեակատարողական ծառայության սպասարկուների պարտադիր մասնագիտական նախապատրաստության, հավաստագրման և պարբերական վերապատրաստության գործընթաց: Ուսումնական կենտրոնում գործող, ծառայությունում նոր ընդունված աշխատակիցների նախապատրաստության և գործող աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ուսումնական դասընթացները, այլ տեսական և գործնական հարցերի հետ միասին ի նկատի են առնում մեղադրյալ/դատապարտյալների առանձնահատուկ կատեգորիաները և նրանց հետ աշխատանքի առանձնահատկությունների ուսուցումը, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ առկա ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մոտեցումներին, հակախտրականության օրենսդրության հետ ծանոթացումը: 2017 թվականին նշված դասընթացների շրջանակներում պատրաստություն/վերապատրաստում անցավ 260 աշխատակից:

## II. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում

### Սոցիալական շարժունություն

**Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից,** 2017 թվականի ընթացքում «Առողջության աջակցության» պետական ծրագրի շրջանակներում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով պատրաստվեցին հետևյալ բովանդակության լուսավորչական նյութերը.

- ❖ «Ծխախոտի վերահսկողության ուժեղացմանը աջակցության բաղադրիչ» (90% վրացերեն, 5% հայերեն և 5% ադրբեջաներեն լեզուներով),
- ❖ Ծխախոտի վերահսկողության նոր կարգավորումների մասին (9000 հատ վրացերեն, 500 հատ հայերեն և 500 հատ ադրբեջաներեն),
- ❖ „C” հեպատիտի կանխում և բնակչության կրթության աջակցության» բաղադրիչ (90% վրացերեն, 5% հայերեն և 5% ադրբեջաներեն),
- ❖ Նպատակային դրամական սոցիալական գոյության նպաստների մասին տպագրվեցին տեղեկատվական բուկլետներ (1000 հատ ռուսերեն, 2000 հատ ադրբեջաներեն և 2000 հատ հայերեն):

Դրա հետ միասին „C” հեպատիտի հարցերով պատրաստված երեք սոցիալական տեսանյութի վրա տեղադրվեցին սուբտիտրեր հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

### Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերով նախարարության գործունեություն

#### Երիտասարդության շրջանում ձեռներեցային լիազորությունների զարգացման ծրագիր

«Երիտասարդների շրջանում ձեռներեցային լիազորությունների զարգացման ծրագրի» շրջանակներում, 2017 թվականին ստորագրվեց Պայմանագիր **Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերով նախարարության** և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության USAID „Zrda“ նախագծի միջև: Տարածաշրջանում բնակվող երիտասարդների զարգացմանը և նրանց զբաղվածության/ինքնազբաղվածության հնարավորությունների ստեղծմանը օժանդակող միջոցառումներին աջակցության համար, նախարարության կողմից մշակվեց նոր նախագիծ «Ձեռներեցության տարածաշրջանային դպրոց»: Դպրոցի նպատակն է ներկայացնում Վրաստանի 4 մունիցիպալիտետներում՝ Պանկիսի կիրճում, Գորիում, Ախալցխիսում և Զուգդիդում բնակվող 17-29 տարեկան երիտասարդների ձեռներեցային և նորարարական լիազորությունների, համապատասխան ունակություն-սովորությունների

զարգացումը գոյություն ունեցող հնարավորությունների կիրառման, անձնական զարգացման, ստարտապի սկսմանը և ինքնազբաղվածությանը օժանդակելու նպատակով:

Նախագծին բոլոր չորս մունիցիպալիտետներից մասնակցեց 160 երիտասարդ: Մարզիչների և մենտորների օգնությամբ բոլոր չորս մունիցիպալիտետում մշակվեց ընդամենը 35 ձեռնարկային գաղափար: Նախագծի ավարտին կայացավ «Դեմո դոե», որտեղ մշակված 35 գաղափարից 13 լավագույն գաղափարի հեղինակները ներկայացրեցին սեփական արտադրանքը: Նրանք հնարավորություն ունեին արտադրանքները ծանոթացնել լայն հասարակությանը, հանդիպել պոտենցիալ գործընկերների և ֆինանսավորողների հետ:

#### **«Բնակչության զարգացման ծրագիր – Վրաստանի կամավոր»**

Ծրագրի նպատակն է կամավորության ինստիտուտի ամրապնդումը, կամավորների միասնական ցանցի զարգացումը Վրաստանի զանգվածով, կամավորության ճանապարհով երիտասարդների շրջանում քաղաքացիական գիտակցության բարձրացումը, կամավորականությամբ հետաքրքրվող երիտասարդների թվաքանակի ավելացումը, քաղաքացիական սեկտորի հետ համագործակցությունը, երկրում հասարակության բարօրության համար, սեփական կամքի հիման վրա անշահախնդիր աշխատանքի գաղափարի ժողովրդականացումը, կամավորների կողմից կատարված աշխատանքի խրախուսումը:

Ծրագրի շրջանակներում Վրաստանի 64 մունիցիպալիտետում և ք. Թբիլիսիում անցկացված մրցույթի հիման վրա 148-ը ընտրվեց, 17-ից մինչև 25 տարեկան մոտիվացված կամավոր, ընդ որում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ (2 կամավոր յուրաքանչյուր մունիցիպալիտետից): Ընտրված երիտասարդները նախապատրաստական վարժանք-սեմինար անցնելուց հետո, մեկ տարվա ժամկետով ստացան «Վրաստանի կամավոր»-ի կարգավիճակ: Կամավորները իրականացնում էին այնպիսի նախաձեռնություններ, ինչպիսիք էին. կամավորների ակումբների ստեղծում, բնապահպանական միջոցառումներ, բարեգործական գործունեություն – տարբեր կարիքներ ունեցող անձանց օգնություն, ֆիլմերի ցուցադրում, օտար լեզվի դասընթացների անցկացում, առողջ կենսակերպի ժողովրդականացում (սպորտային մրցումներ, մարաթոններ), սահմանափակ կարողություններով երեխաների ինտեգրում, տեսարժան ամսաթվերի նշում, ստեղծագործական երեկոների անցկացում, հայտնի անձանց հետ հանդիպումներ և այլն:

- ❖ **«Փոփոխություններ հավասարության համար» նախագիծն** իրականացվում է 2013 թվականից և նախատեսում է գիտակցության բարձրացման նպատակով դասախոսություն-սեմինարների անցկացում: Նախագծի նպատակն է վերացնել սահմանափակ կարողություններով անձանց մեկուսացումը, փլուզել սահմանափակ կարողություններով անձանց նկատմամբ հասարակությունում գոյություն ունեցող բացասական կարծրատիպերը, դրսևորել նրանց իրատեսական կարողությունները անկախ կյանքում և ձևավորել ինկլուզիոն հասարակություն: Ընթացիկ տարի առաջնահերթություն էին

ներկայացնում բարձրալեռ, բաժանող գծի մերձակայքում գտնվող գյուղերը և էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանները: 2017 թվականի միջոցառումներ/հանդիպումներն իրականացվեցին հետևյալ տարածաշրջաններում. Ռուսթավի, Օգուրգեթի, Լագոդեխի (Կաբալա գյուղ), Մառնեուլի, Ծալկա, Ախալքալաքի, Նինոծմինդա, Մեստիա, Բաթումի:

### Սոցիալական օգնության ծրագիր

**Կախերի տարածաշրջանում** տարվա ընթացքում 1100-ից ավելի բենեֆիցիարի ցուցաբերվել է սոցիալական օգնություն տարբեր տեսակյուններով, այդ թվում. բուժսպասարկման և դեղորայքի ֆինանսավորում, տնտեսապես և սոցիալապես կարիքավոր ընտանիքներին մեկանգամյա դրամական օգնություն, նորածին ընտանիքներին օգնություն, բազմազավակ ընտանիքներին օգնություն և այլն: Ընդհանուր առմամբ սոցիալական օգնության ծրագրի շրջանակներում դրամական տեսքով տրվել է 250,000 լարի:

Հաշվետու ժամանակաընթացքում **Սամցխե-Ջավախերի տարածաշրջանում** էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող մունիցիպալիտետներում 4417 բենեֆիցիարի ցուցաբերվել է սոցիալական օգնություն՝ 1 352 075 լարիի չափով: Այստեղից՝ էթնիկ փոքրամասնությունների 2903 ներկայացուցչի օգնության տեսքով տրվել է 864 799 լարի, ընդ որում.

- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետում սոցիալական օգնություն ստացող 1538 բենեֆիցիարից օգնություն ստացել է էթնիկ փոքրամասնության 1083 ներկայացուցիչ - ընդամենը՝ 428 060 լարիի չափով,
- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետում սոցիալական օգնություն ստացող 1540 բենեֆիցիարից օգնություն ստացել է էթնիկ փոքրամասնության 1420 ներկայացուցիչ, ընդամենը՝ 317 195 լարիի չափով,
- ❖ Ախալցխիսեի մունիցիպալիտետում սոցիալական օգնություն ստացող 1339 բենեֆիցիարից օգնություն ստացել է էթնիկ փոքրամասնության 400 ներկայացուցիչ, ընդամենը՝ 119 544 լարիի չափով:

**Քվեմո Քարթլիի տարածաշրջանում** սոցիալական օգնություն է ցուցաբերվել 13 767 բենեֆիցիարի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների. (Ռուսթավում՝ 1700, Բոլնիսում՝ 3670, Գարդաբանում՝ 3400, Դմանիսում՝ 731, Թեթրիձղարոյում՝ 1240, Մառնեուլիում՝ 2276, Ծալկայում՝ 750 բենեֆիցիար):

## Ենթակառույցի վերակառուցում

### Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարության կողմից իրականացված գործունեություն<sup>13</sup>

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց ենթակառույցային նախագծերի իրականացումը, ինչը նախատեսում էր գազիֆիկացիա, ներքին ճանապարհների, ոռոգման և խմելու ջրի համակարգերի, դրսի լուսավորության վերականգնում և այլն:

Մասնավորապես.

#### Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան

- ❖ Սամցխե-Ջավախեթիում՝ տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 64 նախագիծ՝ 14 442 594 լարի ընդհանուր արժողությամբ:
- ❖ ՀԻԻԱ Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Ախալցխեի և Ախալքալաքի մունիցիպալիտետներում ֆինանսավորվեց 2 նախագիծ՝ 2 345 665 լարի ընդհանուր արժողությամբ:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 6 նախագիծ՝ 1 771 635 լարի ընդհանուր արժողությամբ:

#### Քվեմո Քարթլիի տարածաշրջան

- ❖ Քվեմո Քարթլիում՝ տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 67 նախագիծ՝ 20 714 746 լարի ընդհանուր արժողությամբ:
- ❖ ՀԻԻԱ – Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Դմանխի և Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ՝ 279 597 լարի արժողությամբ:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 4 նախագիծ՝ 1 004 787 լարի ընդհանուր արժողությամբ:

#### Կախեթի տարածաշրջան

<sup>13</sup> Ամբողջական տեղեկատվությունը դիտեք [Հավելված 2](#)-ում:

- ❖ Կախերթում՝ տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 118 նախագիծ՝ 26 276 117 լարի ընդհանուր արժողությամբ:
- ❖ ՀԻԻԱ Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Ախմետայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 339 460 լարի ընդհանուր արժողությամբ:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 5 նախագիծ՝ 1 223 313 լարի արժողությամբ:

### **Մամջիե-Չավախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացված գործունեություն**

Տարածաշրջանում գոյություն ունեցող ենթակառուցվածքային մարտահրավերները հաղթահարելու նպատակով 2017 թվականին «Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամով», «Լեռան հիմնադրամով» և տեղական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվեց 323 ենթակառուցային նախագիծ, որոնց արժողությունը կազմեց 42 664 376 լարի: Այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող վարչական միավորումներում իրականացվեց 143 նախագիծ՝ 22 021 214 լարի արժողությամբ:

Տեղական բյուջեի շրջանակներում ֆինանսավորվեց.

- ❖ Ախալցխեի մունիցիպալիտետում 25 ենթակառուցային նախագիծ՝ 3 604 745 լարի արժողությամբ:
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետում 25 ենթակառուցային նախագիծ՝ 3 604 745 լարի արժողությամբ:
- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետում 34 ենթակառուցային նախագիծ՝ 1 403 160 լարի արժողությամբ:

### **Կախերթի պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացված գործունեություն**

2017 թվականին Կախերթի տարածաշրջանի էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում իրականացվեց 36 ենթակառուցային նախագիծ՝ 4,340,400 լարի ընդհանուր արժողությամբ: Այդ թվում տեղական բյուջեից ֆինանսավորվեց.

- ❖ Ախմետայի մունիցիպալիտետում 1 նախագիծ՝ 15 549 լարի արժողությամբ,
- ❖ Լագոդեխի մունիցիպալիտետում 1 նախագիծ՝ 5375 լարի արժողությամբ,

- ❖ Մագարեջոյի մունիցիպալիտետում 13 նախագիծ՝ 189 944 լարի արժողությամբ,
- ❖ Ղվարեի մունիցիպալիտետում 4 նախագիծ՝ 74,465 լարի արժողությամբ,
- ❖ Դեդոփիսադարոյի մունիցիպալիտետում 7 նախագիծ՝ 34 290 լարի արժողությամբ:

Իսկ տարբեր հիմնադրամներից իրականացված ենթակառուցային նախագծերին տեղական բյուջեից համաֆինանսավորումը կազնեց 201 038 լարի:

### **Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացված գործունեություն**

2017 թվականին «Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամով», «Լեռան հիմնադրամով» և տեղական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվեց 356 ենթակառուցային նախագիծ, որոնց արժողությունը կազմեց 58 000 000 լարի: Այդ թվում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող վարչական միավորներում տեղական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվեց.

- ❖ Ծալկայի մունիցիպալիտետում 50 նախագիծ՝ 2 663 400 լարի արժողությամբ,
- ❖ Դմանխում 38 նախագիծ՝ 3277000 լարի արժողությամբ,
- ❖ Մառնեուլիում 74 նախագիծ՝ 9280600 լարի արժողությամբ,
- ❖ Գարդաբանում 31 նախագիծ՝ 16862000 լարի արժողությամբ,
- ❖ Բոլնիսում 23 նախագիծ՝ 336 658 լարի արժողությամբ,
- ❖ Թեթրիձորում 2 նախագիծ՝ 137000 լարի արժողությամբ:

### **III. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում**

Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց որակյալ կրթության մատչելիության ապահովմանը և պետական լեզվի իմացության մակարդակի բարելավմանը, ինչը քաղաքացիական ինտեգրման գործընթացի կարևոր գործիք է:

Կրթության յուրաքանչյուր աստիճան մատչելի է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ապահովված է նաև էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով կրթություն ստանալու հնարավորությունը (աղյուրեջաներեն, հայերեն, ռուսերեն):

Վրաստանում գործում է 211 ոչվրացալեզու հանրային դպրոց և 76 ոչվրացալեզու սեկտոր: Այդ թվում՝ 82 աղյուրեջանալեզու, 118 հայալեզու, 11 ռուսալեզու դպրոցներ, ինչպես նաև վրաց-

աղբբեջաներեն սեկտոր՝ 32, վրաց-ռուսերեն սեկտոր՝ 29, վրաց-հայերեն սեկտոր՝ 10, վրաց-աղբբեջաներեն-ռուսերեն սեկտոր՝ 1, վրաց-ռուսերեն-հայերեն սեկտոր՝ 1:

Այս ուղղությամբ կրթության և գիտության նախարարության կողմից կատարվեցին բազում քայլեր.

- ❖ Ստեղծվեցին և Վրաստանի կառավարության որոշմամբ հաստատվեցին վաղ և նախադպրոցական դաստիարակության և կրթության պետական չափորոշիչները և դաստիարակ-մանկավարժի մասնագիտական չափորոշիչը: Նշված փաստաթղթերում նախատեսված են էթնիկ, մշակութային, լեզվական բազմազանության արտացոլումը, դաստիարակ-մանկավարժների կողմից էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում վրաց լեզվի ուսուցման աջակցությունը, յուրաքանչյուր դաստիարակվողի մեջ զանազանության նկատմամբ հարգանքի զգացումի ձևավորումը և այլն: Դաստիարակ-մանկավարժի մասնագիտական չափորոշիչում առանձին հոդված է հատկացված «Վրացերենը՝ որպես երկրորդ լեզվի» դաստիարակ-մանկավարժի մասնագիտական բնութագրիչների մասին: «Տես՝ դաստիարակ-մանկավարժի մասնագիտական չափորոշիչ, հոդված 8.)
- ❖ Պատրաստվեց էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուների (հայերեն, աղբբեջաներեն, ռուսերեն) չափորոշիչը բազային աստիճանի համար (VII-IX դասարաններ, առաջին տարբերակ),
- ❖ էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով փորձագետների հետ միասին պատրաստվում են տարրական աստիճանի (I-IV դասարաններ) տարեկան ծրագրերը,
- ❖ Հայերեն և աղբբեջաներեն լեզուներով թարգմանվեց տարրական աստիճանի (I-IV դասարաններ) մայրենի լեզվի չափորոշիչը,
- ❖ Ուշադրություն հատկացվեց ոչվրացալեզու դպրոցների մանկավարժների որակավորման բարձրացմանը,
- ❖ Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շարունակվեց և ընդարձակվեց «Հանրային դպրոցի աշակերտների տրանսպորտով ապահովման» ծրագրի տեսադաշտը,
- ❖ «Ամառային դպրոցներ» ծրագրի «Հանգստանանք և սովորենք միասին» շրջանակներում, 2017 թվականին Վրաստանի տարածաշրջանների փոքրաթիվ հանրային դպրոցների աշակերտների համար կազմակերպված ամառային ճամբարներին մասնակցեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 1045 աշակերտ:

**Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը** և իր ենթակայությունում գտնվող Հանրային Իրավունքի Իրավաբանական Անձինք հաշվետու ժամանակաշրջանում շարունակեցին տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը:



### Ազգային ուսումնական օլիմպիադա

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար 2017 թվականին անցկացվեց ազգային ուսումնական օլիմպիադա, որին մասնակցեցին ոչվրացալեզու դպրոցների աշակերտները:

Առարկա	Աշակերտության թվաքանակ
Վրացերենը, որպես երկրորդ լեզու	1841
Առարկաներ ադրբեջաներեն լեզվով	3681
Առարկաներ հայերեն լեզվով	3598
Առարկաներ ռուսերեն լեզվով	1208

Երրորդ փուլի հիման վրա բացահայտվեցին հաղթողները, այդ թվում 10 ռուսալեզու մասնակից:

### Դպրոցի ավարտական քննություններ

2017 թվականի դպրոցի ավարտական քննություններին մասնակցեց.

Հայալեզու աշակերտ	1512
Ադրբեջանալեզու աշակերտ	2057
Ռուսալեզու աշակերտ	1137

Լրիվ միջնակարգ կրթության վկայական ստանալու համար դրական գնահատական ստացան.

Հայալեզու աշակերտ	866
Ադրբեջանալեզու աշակերտ	838
Ռուսալեզու աշակերտ	889

**Բարձրագույն կրթության մատչելիության աճ**

Էթնիկ փոքրամասնությունների բարձրագույն կրթություն ստանալուն օժանդակության նպատակով 2010 թվականից գործում է «Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագիր»<sup>14</sup>, որին ընդունելությունն իրականացվում է ընդհանուր ունակությունները աբխազերեն, օսերեն, ադրբեջաներեն կամ հայերեն լեզուներով թեստերի արդյունքների հիման վրա:

Հատկանշական է, որ Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում զգալիորեն ավելացել է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների թվաքանակը. 2015 թվականին ընդունվեց 741 դիմորդ, 2016 թվականին՝ 960, իսկ 2017 թվականի համազգային քննություններին, ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց 1046 դիմորդ.

- ❖ Ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա՝ 673,
- ❖ Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 373,
- ❖ Օսերեն լեզվով թեստի հիման վրա բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվեց 1 դիմորդ:

Պետական դրամաշնորհով ֆինանսավորվեցին դիմորդներ.

Օսերեն լեզվով թեստի հիման վրա	1
Ադրբեջանալեզու թեստի հիման վրա	83
Հայալեզու թեստի հիման վրա	95

<sup>14</sup> Այսպես կոչված, «1+4» ծրագիր.

**ՀԻԻԱ Դավիթ Ադմաշենեբելիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիայի** յունկերների գումարտակում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրի շրջանակներում բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսեր ընդունվեց 5 յունկեր (3 ադրբեջանցի, 2 հայ): Իսկ ներկայումս հաշվվում է հայազգի 1 յունկեր:

**ՆԳՆ ակադեմիայում** վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրին, 2017-2018 ուսումնական տարում ընդունվել է 3 ադրբեջանալեզու ուսանող: Իրավունքի բակալավրիատի ծրագրով սովորում է ադրբեջանցի 4, հայ՝ 4, օս՝ 1 և թուրք՝ 1 ուսանող: Այդ թվում 2017-2018 ուսումնական տարում ընդունվել են. ազգությամբ ադրբեջանցի 4, հայ՝ 3 և թուրք՝ 1 ուսանող:

**Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը** առանձնահատուկ ուշադրություն հատկացրեց բարձրագույն կրթության ոլորտում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին հատկացված առավելությունների և հնարավորությունների մասին գիտակցության բարձրացման ընթացակարգին: Կայացան հանդիպումներ «Վրաց լեզվից նախապատրաստական հատուկ կրթական ծրագրի», «1+4 ծրագրի» վերաբերյալ (Բոլնիսի, Ախալքալաքի, Լագոդեխի մունիցիպալիտետներում): Տեղեկատվական հանդիպումներին մասնակցում էին Գնահատման և քննությունների ազգային կենտրոնի, Ներքին գործերի նախարարության և Դավիթ Ադմաշենեբելիի անվան ազգային պաշտպանության ակադեմիայի ներկայացուցիչները:

## **Մասնագիտական և չափափասների կրթության ապահովում**

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց գործունեությունը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մասնագիտական կրթության մատչելիության ապահովման ուղղությամբ: Այս տեսանկյունից, ակտիվ գործունեություն իրականացրեց ՀԻԻԱ Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը: Դպրոցի նպատակն է հանրային ծառայությունում որակյալ կադրերի պակասը լրացնել էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող և բարձրալեռ տարածաշրջաններում հանրային աստիճանավորների որակավորման բարձրացման ճանապարհով, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին և ցանկացած հետաքրքրվող անձի ուսուցանել պետական լեզուն:

Տարվա ընթացքում պետական վարչարարության դպրոցը իրականացրեց «Հանրային կառավարման և վարչարարության» ծրագիր:

«Հանրային կառավարման և վարչարարության» ծրագրի վեց ճյուղային ուղղության (պետական գնումներ, հանրային կազմակերպությունների կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում և գործավարություն հանրային սեկտորում, Հանրային ֆինանսների կառավարում, հասարակայնության հետ հարաբերություն և հաղորդակցություն, ենթակառուցային նախագծերի

տեխնիկական վերահսկողություն) շրջանակներում 2017 թվականին ուսուցում անցավ 89 ունկնդիր:

Մասնագիտական ծրագրերին մասնակցության նպատակով 2017 թվականի գարնանային ընդունելությանը 32 ապլիկանտ ցանկություն հայտնեց անցնել մասնագիտական թեստավորում հայոց, ռուսաց կամ ադրբեջաներեն լեզվով, իսկ 2017 թվականի աշնանային ընդունելությանը ապլիկանտների թվաքանակը կազմեց 76:

Մասնագիտական կրթական ծրագրերին գարնանային և աշնանային ընդունելության շրջանակներում վրաց լեզվի մոդուլին ընդգրկվեց 38 արհեստավարժ ուսանող:

2017 թվականին «Դպրոցներում բուլինգի կանխարգելման և հանդուրժողական մշակույթի զարգացման աջակցություն» մոդուլով վարժանք անցավ 352 ուսուցիչ: Բացի քաղաքացիական կրթության ուսուցիչների վարժանքից, վարժանքներ անցկացվեցին ժողովրդավարական մշակույթի իրավասությունների շրջանակի մասին: Մարզիչ-ուսուցիչների պատրաստություն անցան տարբեր առարկաների և աստիճանների 60 մանկավարժներ: Վարժանքներից հետո ուսուցիչները դպրոցներում իրենց աշակերտների հետ սկսեցին աշխատել ժողովրդավարական մշակույթի իրավասությունները ցուցադրող 3-5 բոպեանոց տեսաֆիլմերի վրա: Լավագույն տեսաֆիլմը վերաբերում էր գենդերային կարծրատիպերին: Ֆիլմի հեղինակ աշակերտներին Եվրախորհուրդը հրավիրեց Ստրասբուրգ՝ եզրափակիչ կոնֆերանսին: Ստեղծվեց նաև վարժանք-մոդուլ «Գենդերային մեյնստրիմինգ կրթությունում»:

Վրաստանի կառավարության 2017 թվականի ապրիլի 4-ի թիվ 182 որոշմամբ հաստատվել է աշխատանք փնտրողների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման պետական ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝ աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությամբ աշխատանք փնտրողների մասնագիտական վերապատրաստման կամ աշխատավայրում աշխատանքային փորձի ձեռքբերման, նրանց մրցունակության բարձրացում և այդ ճանապարհով աշխատանք փնտրողների գործադրման ապահովում (աջակցում): Ծրագրի տևողությունը կազմում է 2-ից մինչև 4 ամիս: Ծրագիրը նախատեսում է պետության կողմից ֆինանսավորում վաուչերի տեսքով:

Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության 2017 թվականի պլանի կատարման հաշվետվությունը

Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերում Վրաստանի պետական նախարարի նախաձեռնությամբ նշյալ ծրագրով որպես օգտվող անհատներ համարվում են օկուպացված տարածքների օրինական բնակիչները և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Վերոնշյալ անձինք կազատվեն ծրագրի մասնակցելու այն պարտադիր պայմաններից, որն է ընդհանուր կրթության բազային փուլի հաղթահարման հաստատման փաստաթուղթը: Համապատասխանաբար, օկուպացված տարածքներում օրինականորեն բնակվող մարդիկ և էթնիկ

փոքրամասնությունների ներկայացուցիչները առանց նման փաստաթղթի կկարողանան ստանալ ծրագրի կողմից տրամադրված ծառայությունը: Հատկանշանական է նաև այն, որ այլ հավասար պայմաններում ծրագրով օգտվելու առաջնային արտոնությունը շնորհվում է նման անհատների:

**Վրաստանի ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ակադեմիայում** գործող մասնագիտական պատրաստության կրթական տարբեր ծրագրեր<sup>15</sup> (դեղեկտիվ-քննիչի, ոստիկան-տեսուչների պատրաստության, թաղամասային տեսուչների պատրաստության և Վրաստանի սահմանային ոստիկանության ցամաքային սահմանի պաշտպանության դեպարտամենտի սահմանապահների պատրաստության հատուկ մասնագիտական կրթական ծրագրեր) անցավ ընդամենը 301 ունկնդիր:

Իրավակարգապահության նախագծի շրջանակներում, ՆԳՆ ակադեմիայում դպրոցական այցով գտնվում էր Գարդաբանի մունիցիպալիտետի Վախթանգիսի և Լեմշվենիերի բնակիչ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ հանրային դպրոցի 36 աշակերտ: 2017 թվականին այցով ՆԳՆ ակադեմիայում էր գտնվում ընդհանուր առմամբ 950 աշակերտ/ուսանող:

2017 թվականին **Լագոդեխի մունիցիպալիտետում**, Շրոմա գյուղում իրականացվեց ՀԻԲԱ հասարակական քոլեջի «Աիսի» մասնաճյուղի վերակառուցում: Մասնաճյուղը մասնագետ ուսանողներ ընդունեց 2017 թվականի աշնանային ընդունելության շրջանակներում: Նախապատրաստական աշխատանքներ են սկսվել նաև Մառնեուլի մունիցիպալիտետում մասնագիտական կրթական հիմնարկության զարգացման նպատակով:

**Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի «Գիրք բոլոր գյուղերին»** նախագծի իրականացման նպատակով մայիս-հունիս ամիսներին 15 000 լարի արժողությամբ 10 000 (տասը հազար) կտոր գիրք հավաքվեց-պահեստավորվեց, դասակարգվեց ըստ ժանրերի և ապահովվեց տեղափոխությունը տարածաշրջաններ (Քվեմո Քարթլի, Կախեթի, Շիդա Քարթլի, Սցխեթա-Մթիանեթի):

## **Ոչվրացալեզու դպրոցներում ուսուցիչների որակավորման բարձրացում**

### **«Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր»**

<sup>15</sup> Ծրագրերի շրջանակներում իրականացվում են հետևյալ դասընթացները. Մարդու իրավունքներ, Ոստիկանությունը բազմաէթնիկ հասարակությունում, Հասարակությանը կողմնորոշված ոստիկանություն, Ընտանիքում բռնություն, Խտրականության անթույլատրելիություն և գենդերային հավասարություն:

Ոչվրացալեզու դպրոցներում շարունակվեց «Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի» իրականացումը: Ծրագրի նպատակն է աջակցությունը ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և ուսում/ուսուցման որակի բարելավմանը պետական լեզվի դասավանդման ուժեղացման ճանապարհով: Ծրագիրը կողմնորոշված է (2016-2019 թթ.) նաև ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների, ինչպես առարկայական քննությունների համար նախապատրաստության, այնպես էլ նրանց կողմից պետական լեզուն սովորեցնելու վրա:

«Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման» ծրագիրը նաև ենթադրում է հաղթահարել Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների կադրային դեֆիցիտը: Այս նպատակով դպրոցներ գործուղվեցին.

- ❖ 118 վրացերենի, որպես երկրորդ լեզվի խորհրդատու-ուսուցիչներ,
- ❖ 114 վրացերենի, որպես երկրորդ լեզվի և հասարակական գիտության օժանդակ ուսուցիչներ,
- ❖ 50 երկլեզու օժանդակ ուսուցիչներ՝ ազգային ուսումնական ծրագրով նախատեսված տարբեր առարկայական ուղղություններով:

**Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի՝ Վրաստանի ուսուցիչների և դպրոցի տնօրենների մասնագիտական զարգացման նախագծի շրջանակներում իրականացվեցին մի շարք միջոցառումներ.**

- ❖ 2017 թվականի հուլիսին անցկացվեց առարկայի քննության և առարկայական ու մասնագիտական իրավասությունների հավաստագրում, որին մասնակցեց 177 ռուսալեզու, 369 հայալեզու, 387 ադրբեջանալեզու ապլիկանտ,
- ❖ Տեղի ունեցավ լիդերության ակադեմիա 1 և 2, որի շրջանակներում ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով թարգմանվեցին լիդերության ակադեմիա 1-ինի 3 մոդուլը (գումարային 40 կոնտակտային ժամ) և լիդերության ակադեմիա 2-ի հինգ մոդուլ (գումարային 64 կոնտակտային ժամ) ուղեկից վարժանքային նյութով,
- ❖ Հանրային դպրոցների ոչվրացալեզու տնօրենների և ֆասիլիտատորների համար անցկացվեցին վարժանքներ լիդերության ակադեմիա 1-ի երեք մոդուլից (100 հայալեզու, 58 ադրբեջանալեզու և 9 ռուսալեզու), Անցկացվեցին վարժանքներ ադրբեջանալեզու և ռուսալեզու հանրային դպրոցների տնօրենների և ֆասիլիտատորների համար (հրավիրյալ 81 մասնակից),
- ❖ Ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով թարգմանվեցին ընդհանուր մասնագիտական ունակությունների երեք մոդուլ բոլոր ուղեկից վարժանքային նյութերով.

մասնավորապես, «Աշակերտին կողմնորոշված ուսումնական միջավայրի բնութագրիչներ», «Աշակերտին կողմնորոշված ուսումնական միջավայրի ուսուցման և գնահատման ռազմավարություններ» և «Ուսումնական գործընթացի պոզիտիվ կառավարում և պատրաստություն մասնագիտական զարգացման համար»,

- ❖ Ոչվրացալեզու դպրոցների քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի, աշխարհագրության, անգլերեն լեզվի ուսուցիչների համար անցկացվեցին վարժանքներ ընդհանուր մասնագիտական ունակությունների դասընթացի առաջին մոդուլի համաձայն: Վարժանքներին հրավիրված էին ընդհանուր առմամբ 2091 ուսուցիչներ, որոնցից վարժանքին ներկայացավ 1547 (74%):

### Աջակցություն պետական լեզվի ուսուցման բարելավմանը

Քաղաքացիական ինտեգրման գործընթացում նշանակալից մարտահրավեր է ներկայացնում պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացումը: Կրթության յուրաքանչյուր աստիճանին շարունակվեց այն ծրագրերի և նախագծերի իրականացումը, որոնք նպատակամղված են պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

Վրաստանի պետական լեզվի ուսուցման մատչելիության բարձրացման և ժողովրդականացման աջակցության նպատակով, 2017 թվականի ընթացքում վրացերեի, որպես օտար լեզվի, ուսուցման «Իրբախի» ծրագրի շրջանակներում կատարվեց պլանավորված աշխատանք և տեղադրվեց [www.geofl.ge](http://www.geofl.ge) կայք-էջին. «Աղմարթի» վրաց լեզվի դասագիրք արտասահմանցի սովորողների համար (լեզվի տիրապետման A2+, B2, B2+ մակարդակներ), հարմարեցված ընթերցանության գրականություն (լեզվի տիրապետման B1, B2, B2+ մակարդակներ), ինքնագնահատման սանդղակներ սովորողների համար, ուսումնական պարզաբանմամբ-թարգմանությամբ-աուդիո էլեկտրոնային բառարան (լեզվի տիրապետման B1.1 մակարդակ): Կայք-էջը տարվա ընթացքում ուներ 27 000 օգտատեր:

Պետական լեզվի իմացության մակարդակի բարելավման ուղղությամբ գործունեությունը շարունակեց **ՀԻԻԱ Զուրաբ Շվանիայի անվան հանրային վարչարարության դպրոցը**, որն իրականացրեց «Պետական լեզվի ուսուցման ծրագիր»: Ծրագրի շրջանակներում հանրային սեկտորում աշխատող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները, տեղական ինքնակառավարման մարմինների, երկրամասային վարչությունների, կրթության նախարարության ռեսուրս-կենտրոնների և հանրային դպրոցների աշխատակիցները, ինչպես նաև ցանկացած շահագրգռված անձ հնարավորություն ունի անվճար սովորել պետական լեզուն դպրոցի

ենթակայության ներքո գործող 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում<sup>16</sup> և 175 շարժունակ խմբում (71 գյուղում):

Տարվա ընթացքում պետական լեզվի ուսուցման ծրագրից օգտվեց 3247 բենեֆիցիար (1423 հայ, 1620 ադրբեջանցի, 3 ռուս, 2 հույն, 11 վրացի, 6 չեչեն, 8 օս, 1 ուկրաինացի):

**ՀԻՒԱ ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի «Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի»** շրջանակներում Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների երկու հոսքի համար անցկացվեց պետական լեզվի ուսուցման դասընթաց, որին ընդգրկված էր 1080 ունկնդիր:

Ուսուցիչները, ովքեր հավաստեցին պետական լեզվի իմացությունը առնվազն ա2 մակարդակով, հնարավորություն ունեին ծրագրի շրջանակներում անցնելու մասնագիտական զարգացմանը կողմնորոշված հետևյալ վարժանք-մոդուլները.

- ❖ «Ուսումնական գործընթացի պլանավորում, կառավարում, գնահատում»՝ 283 ունկնդիր,
- ❖ «Ինկլյուզիոն ուսուցում ոչվրացալեզու դպրոցներում»՝ 126 ունկնդիր:

«Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման» ծրագրի խորհրդատու-ուսուցիչների կողմից Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների երկրորդ հոսքի համար անցկացվեց պետական լեզուն սովորելու դասընթաց, որին ընդգրկված էր 540 ունկնդիր, այդ թվում A1 մակարդակ սովորող 80 ունկնդիր, A2+ մակարդակ՝ 303 և B1 մակարդակ՝ 157: Լեզվի դասընթացն ավարտելիս՝ ընդգրկված 460 ուսուցչից վերջնական գնահատման ներկայացավ 440. Նրանցից A1 մակարդակ հավաստեց 55 ունկնդիր, A2 - 171, B1 - 108:

Բացի դրանից, պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով տարբեր հաստատությունների կողմից իրականացվեցին կոնկրետ միջոցառումներ.

**Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի և կրթության ու գիտության նախարարության** սերտ համագործակցության շրջանակներում, ընթացիկ տարվա փետրվարին արխագերեն լեզվի ուսուցում արմատավորվեց Բաթումի թիվ 14 և Փերիա գյուղի հանրային դպրոցներում, իսկ օգոստոս ամսից՝ վրաց լեզվի ուսուցման դասընթացներ բացվեցին ք.Ախալքալաքի Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու թեմում:

**Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի ժողովրդական ժողովին** առընթեր գործող «Բարեկամության տանը» անցկացվեց ուսուցման դասընթաց՝ «Սովորենք վրացերեն»: Նախագծի շրջանակներում,

<sup>16</sup> Ախալքալաք, Նինոծմինդա, Ծավկա, Բոլնիսի, Դմանիսի, Մառնեուլի, Գարդաբանի, Սագարեջո, Ախմետա, Լագոդեխի



Էթնիկ փոքրամասնությունների 38 ներկայացուցիչ անցավ եռամսյա ուսուցման դասընթաց, նրանցից միայն քսան ներկայացուցիչ ավարտեց սովորելը: Այս փուլում վրաց լեզվի ուսուցման դասընթացներին ընդգրկված է Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 95 ունկնդիր:

ՈՌԻԱ - Ոչկոմերցիոն իրավաբանական անձ «Սովորող երիտասարդության ազգային պալատում»<sup>17</sup> գործում է «Վրաց լեզու ոչվրացալեզու աշակերտների համար» ակումբ:

**Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության** սոցիալական բաժինը ապահովում է ոչվրացալեզու դատապարտյալների ընդգրկումը վրաց լեզվի ուսուցման ծրագրին: Վրաց լեզվի ուսուցման դասընթացներին 2017 թվականի ընթացքում ընդգրկված էր 74 ոչվրացալեզու դատապարտյալ:

**Վրաստանի Արդարադատության ուսումնական կենտրոնը** վրաց լեզվի անվճար դասընթացներ առաջարկեց Վրաստանի ոչվրացալեզու քաղաքացիներին: 2017 թվականի ընթացքում պետական լեզվի ուսուցման դասընթաց իրականացվեց Մառնեուլի մունիցիպալիտետի Սադախլո գյուղի (23 մասնակից) և Սագարեջոյի մունիցիպալիտետի Իորմուդանլո գյուղի (16 մասնակից) հասարակական կենտրոններում:

#### **IV. Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խրախուսում**

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց տարբեր ծրագրերի/նախագծերի և միջոցառումների իրականացումը, ինչը նպատակաուղղված էր Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանմանը-զարգացմանը և ժողովրդականացմանը: Մշակութային ինքնադրսևորման աջակցության և հետագա ինտեգրման նպատակով նշանակալից էր օժանդակությունը թանգարանների և թատրոնների գործունեությանը՝ ֆինանսական աջակցության ապահովման ճանապարհով:

#### **Թատրոնների օժանդակություն**

- ❖ **ՀԻԻԱ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական արհեստավարժ թատրոնը** ներկայացրեց 15 բեմադրություն, այդ թվում 3 առաջնախաղ: Ներկայացումներին

<sup>17</sup> Պալատում հաշվվում է Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 237 սովորող, ովքեր ընդգրկված են տարբեր շրջանաձև խմբերում, միջոցառումներին և ակտիվություններին:

- ներկա էր 3592 հանդիսատես: Տարվա ընթացքում թատրոնը ֆինանսավորվեց 396 000 լարիով:
- ❖ **ՀԻԻԱ Հեղար Ալիևի անվան Թբիլիսիի ադրբեջանական արհեստավարժ պետական դրամատիկական թատրոնը** անցկացրեց 7 ներկայացում, 2 արտագնա ներկայացում Գարդաբանիում, 2 առաջնախաղ, 1 հյուրախաղ Թուրքիայի ք.Ադանայում, որին ներկա էր 850 հանդիսատես: Տարվա ընթացքում թատրոնը ֆինանսավորվեց 220 881 լարիով:
  - ❖ **ՀԻԻԱ Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան ռուսական արհեստավարժ պետական դրամատիկական թատրոնը** անցկացրեց 103 ներկայացում, ներկա էր 3147 հանդիսատես: Ք.Մազիլովում կայացավ 20 հյուրախաղային բեմադրություն, 2 արտագնա ներկայացում: Թատրոնը ֆինանսավորվեց 1 089 000 լարիով:

### **Թանգարանների օժանդակություն**

- ❖ **ՀԻԻԱ Դավիթ Բաագովի անվան Վրաստանի հրեական և վրաց-հրեական փոխհարաբերությունների պատմության թանգարան**՝ «Վրաստանի հրեական պոեզիայի անթոլոգիա» գիրքը հրատարակվեց «Դավիթ Բաագովի անվան Վրաստանի հրեաների և վրաց-հրեական փոխհարաբերությունների պատմության թանգարանի» աջակցությամբ: 2017 թվականին «Բաթ-Իամ» քաղաքի (Իսրայել) «Էշկոլ Պախի» մշակույթի տանը անցկացվեց գրքի շնորհանդեսը: Աշխատությունը նվիրված է վրացիների և հրեաների 26-դարյա համակեցությանը: Թանգարանի գործունեության շրջանակներում տեղի ունեցավ 2 ցուցահանդես, 1 երեկո, 1 հոբելյանական միջոցառում, 1 հանդիպում, ձայնագրվեց 2 ռադիո և հեռուստահաղորդում: Տարվա ընթացքում թանգարանը ֆինանսավորվեց 115 000 լարիով,
- ❖ **ՀԻԻԱ Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարան**՝ 2017 թվականին կայացավ 4 ցուցահանդես, վավերագրական ֆիլմերի ցուցադրություն, 2 մշակութային-ճանաչողական միջոցառում, 1 շնորհանդես: Տարվա ընթացքում թանգարանի ֆինանսավորումը կազմեց 37 000 լարի:
- ❖ **ՀԻԻԱ Սմիռնովների թանգարան**՝ թանգարանը բացվեց ապրիլ ամսին և դրա բյուջեն կազմում է 63 216 լարի: Անցկացվեց երեք միջոցառում, այդ թվում ֆիլմի շնորհանդես, հանդիպումներ:

Տարվա ընթացքում առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակութային ժառանգության, նյութական և ոչնյութական մշակութային արժեքների պահպանության հարցին:

### **Մշակութային ժառանգության հուշարձանների վերակառուցում**

Գերմանիայի Դաշնային Հանրապետության դրամաշնորհային ֆինանսավորմամբ՝ 50 000 եվրոյի շրջանակներում, պլանավորված է «Գերմանացի գաղութայինների ճարտարապետական ժառանգությունը Վրաստանում» գրքի հրատարակությունը:

Նաև նախատեսված է Ասպինձայի մունիցիպալիտետում, Օթա գյուղում և Ախալցխի մունիցիպալիտետում, Սաղունեթի գյուղում, մզկիթների վերակառուցման նախագծի նախապատրաստումը:

### Աջակցություն մշակութային միջոցառումներին

**2017 թվականին Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարությունը** «Էթնիկ փոքրամասնություններին աջակցություն» առաջնահերթությանը հատկացրեց 185 750 լարի: Առաջնահերթության շրջանակներում շարունակվեց օժանդակությունը մշակույթի ոլորտում գործող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ցուցահանդեսներին, հրատարակություններին, բեմադրություններին, երեկոներին, այլ մշակութային միջոցառումներին: Առաջնահերթության շրջանակներում իրականացվեց 14 նախագծի աջակցություն (**տես՝ Հավելված 3**):

Միջմշակութային երկխոսության խորացման և քաղաքացիական ինտեգրման գործընթացին աջակցության նպատակով **Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը**, համապատասխան հաստատությունների հետ համագործակցությամբ իրականացրեց հետևյալ միջոցառումները.

- ❖ «Պանկիսոբա 2017» - պետական նախարարի աշխատակազմի ընդգրկմամբ և Կախեթի երկրամասային վարչության կազմակերպմամբ, Պանկիսոբայի տոնը Դուխի գյուղում նշվեց մասշտաբային: Միջոցառումների շրջանակներում, տարբեր նախարարությունների կողմից ներկայացված էին գործունեությունն արտացոլող ցուցահանդեսներ: Ժողովրդական տոնի շրջանակներում տեղի ունեցան մշակութային, սպորտային և կրթական միջոցառումներ, պարզևատրվեցին վաստակավոր, պատվավոր քաղաքացիները:
- ❖ Վայնախյան մշակույթի շաբաթ – պետական նախարարի աշխատակազմի և Գորիի պետական ուսումնական համալսարանի համագորակցության շրջանակներում իրականացվեց բազմազան ծրագիր՝ համերգ, հանրային դասախոսություններ, քիստական բանահյուսության և արվեստի նմուշների ցուցահանդես, վայնախյան թեմայով ստեղծված գրքերի շնորհանդես, Պանկիսի կիրճի և պանկիսեցի քիստ կանանց մասին նկարահանված տեսահոլովակների շնորհանդես, քիստ պոետների ստեղծագործության ծանոթացում, մանկական թատրոնի ներկայացում, սպորտային միջոցառումներ և այլն:
- ❖ Մուլտիէթնիկ արվեստի փառատոն «Մեկ երկնքի տակ – մշակույթների երկխոսություն» Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի ֆինանսական աջակցությամբ, Վրաստանի Մշակույթի և

հուշարձանների պաշտպանության նախարարության, ինչպես նաև Սպորտի և երիտասարդության գործերի նախարարության հետ համագործակցությամբ անցկացվեց ամենամյա մուլտիէթնիկ արվեստի փառատոն «Մեկ երկնքի տակ – մշակույթների երկխոսություն», որին մասնակցում էին վրացի և Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդները: 2017 թվականի ընթացքում, փառատոնի շրջանակներում անցկացվեց երկու համերգ (քաղաք Ախալցխիսում և քաղաք Ռուսթավիում):

- ❖ Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, Վրաստանի անկախության օրվան նվիրված Մցխեթա քաղաքում անցկացվեց ազգագրական համերգ: Համերգի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները ընթերցեցին քաղվածքներ «Ընձենավորից» վրացերեն և մայրենի լեզուներով: Այս նույն միջոցառմանը պարգևատրվեցին պետական նախարարի աշխատակազմի կողմից հայտարարված «Վրաց լեզու – ճանապարհի դեպի իմ հաջողություն» էսսեների մրցույթի հաղթողները:
- ❖ Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված շաբաթի շրջանակներում իրականացվեցին մի շարք միջոցառումներ: Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակներում անցկացվեց պաշտոնական ընդունելություն, որտեղ պարգևատրվեցին «Վրաստանի էթնիկ բազմազանություն» մեդիա մրցույթի հաղթողները:
- ❖ Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի հետ համագործակցությամբ անցկացվեց չեչեն և ինգուշ ժողովուրդների բռնարտաքսման 73-ամյակին նվիրված հիշատակի երեկո: Երեկոյին ներկա էին տարբեր գիտական խմբերի ներկայացուցիչները, հասարակական գործիչներ, Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ և Պանկիսի կիրճից ժամանած հյուրեր:
- ❖ Պետական նախարարի աշխատակազմի և Վրաստանի խորհրդարանի կազմակերպմամբ, Շոթա Ռուսթավելիի անվան խորհրդարանական դահլիճում տեղի ունեցավ օս-վրացական փոխհարաբերություններին նվիրված երեկո: Միջոցառման նպատակն էր օսական մշակույթի ներկայացում-ժողովրդականացումը: Միջոցառմանը ներկայացվեցին Հարավային Օսիայի վարչությանը կից գործող «Նարթեբի» պարային համույթի, «Լիախվա» երգչախմբի և Ցխինվալի թատրոնի կողմից կատարված երաժշտական և պարային համարներ:
- ❖ Տարվա ընթացքում, Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարը, պարբերաբար շնորհավորում է Վրաստանում բնակվող էթնիկ և կրոնական փոքրամասնություններին, ինչպես բնակչությանը, այնպես էլ դիվանագիտական կորպուսին՝ նրանց ազգային և կրոնական տոները:

## **Պետական լիազոր-նահանգապետի վարչությունների կողմից իրականացված գործունեություն**

**Մամջիսե-Ջավախեթի** երկրամասային վարչությունը ակտիվորեն է ընդգրկված այն միջոցառումների կազմակերպման մեջ, որոնք օժանդակում են էթնիկ փոքրամասնությունների մշակութային և ինքնության պահպանմանը: Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող վարչական միավորներում գործում են ակումբային հիմնարկություններ, ստեղծվել են երգի և պարի համույթներ: Ախալքալաքում և Նինոծմինդայում գործում են երաժշտական դպրոցներ: Իսկ Ախալքալաքում և Ախալցխիսեում՝ գեղանկարչության դպրոցներ, որոնք մշտապես մասնակցում են տեղական կամ միջազգային ցուցահանդեսներին: Դրա հետ միասին, մշակութային ավանդույթների պաշտպանության նպատակով տեղական բյուջեներով իրականացվում են տարբեր օբյեկտների ֆինանսական աջակցություն և միջոցառումների ֆինանսավորում: Մամջիսե-Ջավախեթի 6 մունիցիպալիտետում ընդհանուր հաշվով գործում է 183 մշակութային հիմնարկություն, ինչպես նաև 11 գեղագիտական և երաժշտական դպրոց:

### **Կախեթի տարածաշրջանի երկրամասային վարչության կողմից իրականացված գործունեություն**

Հաշվետու ժամանակաընթացքում Կախեթի տարածաշրջանում պլանավորվեցին և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվեցին տարբեր մշակութային և սպորտային միջոցառումներ: Մասնավորապես, «Նովրուզ բայրամ», «Հացի և գինու փառատոն», Կոստա Խեթագուրովի 158-ամյա հոբելյանին նվիրված «Կոստաոբա» տոնական միջոցառում, Վրաստանի անկախության օրվան նվիրված համերգ, ուսուցիչների միջազգային օրվան նվիրված միջոցառում և այլն:

Սպորտային միջոցառումներին ակտիվորեն մասնակցում էին տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց Պանկիսի կիրճում երիտասարդ սերնդի շրջանում առողջ կենսակերպի արմատավորմանը: Հաջողակ մարզիկները մասնակցություն ունեցան մարզական դպրոցների ժամանակակարգով նախատեսված ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային մրցաշարերին, սպորտի հետևյալ տեսակներին. ձյուդո, հունա-հռոմեական, ատլետիկ, ռագբի, կիկ-բոքսինգ, ֆուտբոլ: Սպորտի այս մարզաձևերով զբաղված է կիրճի շուրջ 350 երեխա: Այդ թվում.

- ❖ ՈՌԻԱ «Բախտրիոնի» ֆուտբոլային դպրոցի բազայի վրա Պանկիսի կիրճում գործում է չորս ֆուտբոլային խումբ (Դուխի, Ջոդոլո, Բիրկիանի, Օմալո գյուղերում), որտեղ շուրջ 80 երեխայի սպասարկում է չորս մարզիչ-ուսուցիչ:
- ❖ ՈՌԻԱ Զ.Զվիադաուրիի անվան ձյուդոյի դպրոց. կիրճում բացվել է երեք ըմբշամարտի դահլիճ (Դուխի, Սակոբիանո, Դումաստուրի գյուղերում), որտեղ վեց տարբեր խմբերում մարզվում է մինչև 120 երեխա: 2017 թվականին սկսնակ մարզիկները մասնակցեցին մրցաշարերին:

- ❖ ՈՌԻԱ կոմպլեքսային մարզական դպրոցի բազայի վրա Պանկիսի կիրճում 2017 թվականին գործում էր չորս մարզական խումբ (կիկ-բոքսինգ, հունա-հռոմեական ըմբշամարտ և ատլետիզմ), որտեղ շուրջ 150 երեխայի սպասարկում է ութ մարզիչ-ուսուցիչ:

Քաղաք Լագոդեխում երիտասարդության հարցերի և սպորտի զարգացման կենտրոնում, նույն ծառայության աշխատակիցների նախաձեռնությամբ սարքավորվեց օրվա կենտրոն: Նախագիծն իրականացվեց «Լեյլ» համայնքային կենտրոնի և երիտասարդության հարցերով և սպորտի զարգացման կենտրոնի համաֆինանսավորմամբ, որտեղ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ և սոցիալապես անպաշտպան դպրոցի սովորողներին օգնություն են ցուցաբերում դասերի պատրաստման և ունակությունների-սովորությունների բարձրացման մեջ:

### **Քվեմո Քարթլիի երկրամասային վարչության կողմից իրականացված գործունեություն**

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում իրականացված մշակութային և սպորտային ակտիվություններին ակտիվորեն ընդգրկված են էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Տարածաշրջանի զանգվածով անցկացվեցին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են. Խաբ Նիսանի, Նովրուզ Բայրամ, Գարիսոբա, Հանդուրժողականության օր, Միասնական Կովկաս փառատոն, խաղաղության թեմայով նկարների ցուցահանդես, Աղայանի հիշատակին նվիրված միջոցառում, Ասուրեթի գյուղում գերմանացի շվաբների վերաբնակեցման 200-ամյա հոբելյանին նվիրված միջոցառում: Դրա հետ միասին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հավասարապես ընդգրկված են և մասնակցում են Կանանց միջազգային օրվան, Մայրենի լեզվի օրվան, Երկրագնդի օրվան, Անկախության օրվան, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներին:

Մունիցիպալիտետները իրենց իրավասության շրջանակներում ապահովում են էթնիկ փոքրամասնությունների մշակութային հուշարձանի կարգավիճակ կրող օբյեկտների, շենք-շինությունների, պատմական մշակութային տաճարների, աղոթարանների խնամքը և հոգատարությունը:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ընթացող մարզական ակտիվություններին և միջոցառումներին, ի մասնավորի ֆուտբոլի, ըմբշամարտի, բասկետբոլի, ձյուդոյի, վոլեյբոլի, կիկ-բոքսինգի տեղական թե տարածաշրջանային մրցաշարերին հավասարաչափ ընդգրկված են էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Դպրոցական սպորտային օլիմպիադաներին, սպորտային փառատոններին «Սպորտ առանց պատնեշների» Վրաստանի, Եվրոպայի և միջազգային մրցաշարերի 66 մարզիկներից 13-ը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մարզիկ է:

**Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության քրեակատարողական հիմնարկություններում ակտիվորեն ընթանում էր տարբեր մշակութա-ճանաչողական և**

մարզական ակտիվություն: Հաշվետու ժամանակաշրջանում, քրեակատարողական հիմնարկություններում իրականացվեց 337 մշակութային և 35 մարզական միջոցառում: Միջոցառումներին ակտիվորեն ընդգրկված էին էթնիկ փոքրամասնություններին պատկանող դատապարտյալները:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկությունում գոյություն ունի սենյակ, որտեղ տարբերվող դավանանքի ներկայացուցիչները հանդիպում են իրենց հոգևոր հովիվներին և անց են կացնում հոգևոր ծիսակատարություններ: Նույնպես, թիվ 5 կանանց քրեակատարողական հիմնարկությունում Իսլամի հետևորդ մեղադրյալ/դատապարտյալների համար գործում է կրոնական ծիսակատարությունների իրականացման հատուկ սենյակ:

### **Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի կողմից իրականացված գործունեություն**

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանը ակտիվորեն համագործակցում էր Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի, Վրաստանի Ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից գործող Հանդուրժողականության կենտրոնի, Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների համայնքների հետ:

Գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագորակցության արդյունքում, 2017 թվականին Ազգային գրադարանում անցկացվեց 3 միջոցառում, դրանց շրջանում էին լուսանկարչական ցուցահանդեսներ, համերգներ, գրքերի շնորհանդեսներ: Վերոնշյալ միջոցառումների նպատակն էր Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության, արվեստի և ավանդույթների ժողովրդականացումը, դրանց ինտեգրումը մշակութային տարածությունում:

Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի կողմից իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- ❖ Սերգո Փարաջանովի 93–ամյա հոբելյանին նվիրված միջոցառում,
- ❖ Ազգային գրադարանի «Էկվիլիբրիում» շարժման շրջանակներում Սագարեջոյի մունիցիպալիտետի Լամբալո գյուղի ոչվրացալեզու դպրոցում բացվեց գրադարան:
- ❖ Ազգային գրադարանի «Էկվիլիբրիում» շարժման շրջանակներում Բոլնիսի մունիցիպալիտետի ոչվրացալեզու դպրոցներին (Սավանթի, Քվեմո Արքևանի) փոխանցվեցին գրքեր:

### **Ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի կողմից իրականացված գործունեություն**

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ գործունեությունը շարունակեց ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի Ժողովրդական ժողովին կից գործող «Բարեկամության տունը»:

«Բարեկամության տանը» մշտապես անց էին կացվում մշակութային-ճանաչողական միջոցառումներ («Մասլենիցա» ժողովրդական տոնահանդես, բելոռուսական համայնքի կողմից՝ հայտնի գրողների շաբաթ, հրեական կենտրոնի տնօրեն տիկին Զաիրա Դավարաշվիլիին Պատվավոր քաղաքացու տիտղոսի շնորհում և այլն) և վարժանքներ («Հաջողակ բանակցությունների վարում և աջակիցների մոբիլիզացում»), որին ակտիվորեն մասնակցում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Ժողովրդական ժողովի նախաձեռնությամբ, անցկացվեց թվով 10-րդ կոնֆերանսը «Ավելի լավ ճանաչենք Կովկասը» թեմայով: Կոնֆերանսին թբիլիսեցի բարձրագույնագիտական հետ միասին մասնակցում էին թելավցի և պանկիսցի աշակերտներ, կոնֆերանսի մասնակիցները ներկայացրեցին աշխատություններ Կովկասյան ժողովուրդների մշակույթի, պատմության, ավանդական կանոնների-սովորությունների, կեցության կարգի, բազմադարյա փոխհարաբերությունների կապակցությամբ: Ցուցադրվեցին կովկասյան թեմայով կատարված աշակերտների աշխատանքները:

Ներկայումս ընթանում է ակտիվ աշխատանք «Թբիլիսիի Բարեկամության տանը» էթնիկ փոքրամասնությունների թանգարանի բացման կապակցությամբ:

### **Ք. Բաթումի մունիցիպալիտետի կողմից իրականացված գործունեություն**

Ք.Բաթումի մունիցիպալիտետի կողմից հիմնադրված Ո(ո)ԻԱ «Բաթումի մշակույթի կենտրոնին» կից գործող «Բարեկամության տան» շրջանակներում անցկացվեցին հանդիպումներ գրողների, բանաստեղծների, արվեստի ոլորտի գործիչների հետ, տեղի ունեցան գրքերի շնորհանդեսներ, սկսնակ նկարիչների ցուցահանդեսներ: Սովորող-երիտասարդության և ուսանողների համար անցկացվեցին ինտելեկտուալ խաղեր, կազմակերպվեցին երեկոներ, կոնֆերանսներ:

### **Վրաստանի Սպորտի և Երիտասարդության գործերով նախարարության կողմից իրականացված գործունեություն**

- ❖ Խվամլիի լեռան երիտասարդական ճամբար – Խվամլիի լեռան վրա կազմակերպվեց հնէաբանական ճամբար, որի շրջանակներում պլանավորվեցին արշավներ Խվամլիի լեռան և Ուծվաշի բերդեր: Մասնակիցներին անցկացվեցին առաջնային օգնության ցուցաբերման մասին վարժանք և դասախոսություններ հնէաբանությունից և պատմությունից: Նախագծի բենեֆիցիարներ էին ընդհանուր առմամբ 19 երիտասարդ (7 աղջիկ, 12 տղա), որոնցից 5-ը էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ էր:
- ❖ Պանկիսում, Թուշեթում և Փշավ-Խնսուրեթում զբոսաշրջության զարգացման մեջ տեղական երիտասարդության ընդգրկվածությանը աջակցության նպատակով իրականացված



նախագծում, որը նախատեսում էր երիտասարդության նախապատրաստումը լեռը ոտքով բարձրանալուն, որպես ուղեվար՝ գիդ մասնակցեց 15 երիտասարդ: Եռօրյա դասընթացի ավարտից հետո հետիոտն ուղեվարները մարզիչի հետ միասին պլանավորեցին և իրականացրեցին 9-օրյա արշավ: Արշավի ժամանակ նրանք Պանկիսի կիրճից անցան Թուշեթի և կատարեցին նոր հետիոտն երթուղու դրոշմանշում: Նախագծի շրջանակներում պատրաստվեց Պանկիսի-Տբաթանա-Բորբալո-Թուշեթի երթուղու մանրամասն նկարագրությունը, որը հրապարակվեց էլեկտրոնային և տպագիր տեսքով:

- ❖ Էկոճամբար – նախագիծը նպատակադրված է դեռահասների շրջանում էկոլոգիայի և բնապահպանության նշանակության մասին գիտակցության բարձրացմանը և նշված թեմաներով ոչձևական կրթական ակտիվություններին շահագրգռված երիտասարդների ընդգրկմանը և խրախուսմանը: Ինկլյուզիոն խումբը կազմվեց Վրաստանի զանգվածով 14-16 տարեկան երիտասարդներից: Էկոճամբարի շրջանակներում անցկացվեցին կանաչապատման և բարեկարգման ակցիաներ: Մասնակիցները աշխատեցին ակտիվ քաղաքացիություն, կամավորություն, թիմի կառուցում, հասակակից լուսավորություն, Վրաստանի պաշտպանված տարածքներ, մնացորդների կառավարում, կլիմայի փոփոխություններ և բնական վթարներ, նախագիծ գրելու և շնորհանդեսի ունակություն-սովորություններ թեմաներով, ինչպես նաև հետաքրքիր խաղեր և ճանաչողական ակտիվությունների միջոցով դիտեցին Լագոդեխի պաշտպանված տարածքները: Մասնակիցները ներկայացված էին հետևյալ տարածաշրջաններից. Թբիլիսի, Մառնեուլի, Հերեթի (Կախի), Լագոդեխի, Գարդաբանի, Նինոծմինդա:

## V. Միջազգային պարտավորությունների կատարում

Էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության տեսակետից Վրաստանը տարբեր միջազգային գործիքների շրջանակներում կատարում է միջազգային պարտավորությունները: Պետությունը միացած է ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիային և համապատասխանաբար, միջազգային համագործակցության առջև ստանձնել է այն պարտավորությունը, ինչը ենթադրում է էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն և նրանց պատվավոր մասնակցության ապահովում երկրի զարգացման մեջ: Ելնելով նշված մեխանիզմից, Պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ, մոնիտորինգի երրորդ փուլի շրջանակներում պատրաստվեց պետական հաշվետվություն, որը 2017 թվականի հուլիսին ներկայացվեց Եվրոպայի խորհրդին: Հաշվետվությունն ընդգրկում է 2012-2017 թվականների ժամանակաշրջանը և արտացոլում է Վրաստանի կողմից կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարումը:

2017 թվականի գործնական պլանի իրականացման գործընթացում Պետական նախարարի աշխատակազմը ակտիվորեն համագործակցում էր քաղաքացիական սեկտորի, միջազգային կազմակերպությունների, երկրում լիազորագրված դիվանագիտական կորպուսի, տեղական և միջազգային փորձագետների, ժողովրդական պաշտպանի գրասենյակին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ, ինչպես նաև պետական նախարարի աշխատակազմը մշտական հաղորդակցություն ուներ էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանների բնակչության, տեղական ինքնակառավարման և ոչկառավարման կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Գործնական պլանով նախատեսված միջոցառումների և նախագծերի իրականացման նպատակով Պետական նախարարի աշխատակազմի աջակցությունը իրականացվում էր ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) «Հանդուրժողականության և ինտեգրման աջակցության ծրագրի» շրջանակներում:

**Հավելված 1**

**Ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարտզություն վարելու և ընտրական մշակույթի ուժեղացման նպատակով ԿԸՀ-ի կողմից քաղաքացիական կազմակերպությունների և էթնիկ փոքրամասնությունների համայնքներին տրված փոքր դրամաշնորհներ**

1	ՈՌԻԱ հասարակական պաշտպան	Ախմետա, Ղվարելի, Լագոդեխի, Թելավի	25 035 լարի
2	ՈՌԻԱ նոր սերունդ-ժողովրդավարական ռնտոու թու ններո	Ռուսթավի, Գարդաբանի, Ծալկա, Թեթրիձղարո	25 095 լարի
3	ՈՌԻԱ միություն միասնական-քաղաքացիական շարժում	Սամցխե-Ջավախեթի	37 907 լարի
4	ՈՌԻԱ իրազեկված հասարակություն	Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի	18 220 լարի

5	ՈՌԻԱ ուսանողական միջազգային նախաձեռնություն	Սամցխե-Ջավախեթի	18 965 լարի
6	ՈՌԻԱ Երիտասարդական կենտրոն – Մեր սերունդ 1921	Դեդոփլիսձղարո, Սիդնախի, Գուրջաանի	18 842 լարի
7	ՈՌԻԱ Կանանց ոչկառավարական կազմակերպություն «Փարոս» միություն	Նինոծմինդա, Ախալցխե	18 954 լարի
8	ՈՌԻԱ «Առողջ աշխարհ»	Սագարեջո, Թելավի, Լագոդեխի	18 550 լարի
		<b>Ընդամենը</b>	<b>181 568 լարի</b>

## Հավելված 2

### Ենթակառույցի վերականգնում

#### Քվեմո Քարթլիի տարածաշրջան

##### Ռուսթավի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ռուսթավի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 11 նախագիծ՝ գումարային 7 436 441 լարի արժողությամբ:

##### Բոլնիսի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Բոլնիսի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 10 նախագիծ՝ գումարային 5 041 835 լարի արժողությամբ:

##### Գարդաբանի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Գարդաբանի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ գումարային 2 289 053 լարի արժողությամբ:

### **Դմանիսի**

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Դմանիսի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 4 նախագիծ՝ գումարային 1 466 923 լարի արժողությամբ:
- ՀԻԻԱ-Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Դմանիսի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 170 240 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Դմանիսի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 320 092 լարի արժողությամբ:

### **Թեթրիձղարո**

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 5 նախագիծ՝ գումարային 2 758 752 լարի արժողությամբ:
- ՀԻԻԱ- Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ՝ 4 404 945 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 332 500 լարի արժողությամբ:

### **Մառնեուլի**

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Մառնեուլի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 21 նախագիծ՝ գումարային 5 668 007 լարի արժողությամբ:

### **Ծալկա**

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Ծալկայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 10 նախագիծ՝ գումարային 2 455 573 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ծալկայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ՝ 396 560 լարի արժողությամբ:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքային նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի կողմից Քվեմո Քարթլիում 2017 թվականին

Ֆինանսավորվեց 6 նախագիծ՝ գումարային 8 777 306.29 լարի արժողությամբ, ինչպես նաև ընթանում է 2 նախագիծ և 2017 թվականին ֆինանսավորվել է 223 013.03 լարիով:

## Մամցիսե-Ջավախեթի տարածաշրջան

### Ախալցխիսե

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Ախալցխիսեի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 12 նախագիծ՝ գումարային 3 464 643 լարի արժողությամբ:
- ՀԻԻԱ-Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Ախալցխիսեի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ՝ 1 534 812 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ախալցխիսեի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ՝ 574 944 լարի արժողությամբ:

### Ախալքալաքի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Ախալքալաքի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 9 նախագիծ՝ գումարային 4 783 867 լարի արժողությամբ:
- ՀԻԻԱ-Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Ախալքալաքի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 1 409 556 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ախալքալաքի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 177 773 լարի արժողությամբ:

### Ադիգենի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Ադիգենի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 6 նախագիծ՝ գումարային 2 285 505 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ադիգենի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 275 000 լարի արժողությամբ:

### Ասպինձա

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Ասպինձայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 6 նախագիծ՝ գումարային 2 638 583 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ասպինձայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 489 499 լարի արժողությամբ:

## Նինոմինդա

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Նինոմինդայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 3 նախագիծ՝ գումարային 1 879 878 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Նինոմինդայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 272 419 լարի արժողությամբ:

## Բորժոմի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Բորժոմի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 19 նախագիծ՝ գումարային 6 425 614 լարի արժողությամբ:
- ՀԻԻԱ-Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Բորժոմի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 3 նախագիծ՝ 4 706 113 լարի արժողությամբ:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի կողմից Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում 2017 թվականին ֆինանսավորվեց 9 նախագիծ՝ 29 076 038.27 լարի արժողությամբ, ինչպես նաև ընթանում է 4 նախագիծ, ինչը 2017 թվականին ֆինանսավորվել 1 372 527.88 լարիով:

## Վախեթի տարածաշրջան

### Լագոդեխի

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Լագոդեխի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 15 նախագիծ՝ գումարային 3 594 980 լարի արժողությամբ:

### Ախմետա

- Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, Ախմետայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 12 նախագիծ՝ գումարային 2 840 434 լարի արժողությամբ:
- ՀԻԻԱ- Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Ախմետայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 4 նախագիծ՝ 3 162 012 լարի արժողությամբ:
- Բարձրալեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ախմետայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 4 նախագիծ՝ 1 118 024 լարի արժողությամբ:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի կողմից Կախեթի տարածաշրջանում 2017 թվականին ֆինանսավորվեց 4 նախագիծ՝ գումարային 2 068 653.44 լարի արժողությամբ:

### Հավելված 3

#### **«Էթնիկ փոքրամասնությունների աջակցության» առաջնահերթության շրջանակներում ֆինանսավորվեցին հետևյալ նախագծերը.**

- ❖ **Վրաստանի Կանանց խորհրդի «Միրո ճանապարհով» նախագծի** շրջանակներում ք. Բորջոմում կազմակերպվեց Վրաստանի և Ուկրաինայի միջև հարաբերությունների հաստատման 100-ամյա հոբելյանին նվիրված ցուցահանդես և համերգ Սամցխե-Ջավախեթիում բնակվող ուկրաինացիների, օսերի, հայերի, հույների և վրացիների մասնակցությամբ: Անցկացվեց նրանց ավանդական ճաշատեսակների շնորհանդես, ինչպես նաև կազմակերպվեց ուկրաինական ավանդական արվեստի և ձեռքի աշխատանքների վարպետաց դաս:
- ❖ **Ո(Ն)ԻԱ Վրացահայերի միության» «Հայ մշակույթը բազմազգ Վրաստանում» նախագծի** նպատակն էր ներկայացնում մայրաքաղաքի և տարածաշրջանների էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ստեղծագործական ակտիվությունների, այդ թվում համերգի և ցուցահանդեսի անցկացում և Վրաստանում հայկական մշակույթի առանձնահատկությունների ներկայացում-ժողովրդականացումը,
- ❖ **«Կովկասցի կանանց կոնգրես» կանանց միության «Քիստական բանահյուսության և արվեստի նմուշների ցուցահանդես և համերգ ազգագրական պետական կենտրոնում» նախագիծ**՝ քիստական ազգագրական և արվեստի նմուշները վրաց հասարակությանը ծանոթացնելու նպատակով կայացած միջոցառումը ներառում էր համերգ և ցուցահանդես Թբիլիսիում, ազգագրական պետական կենտրոնում,
- ❖ **Ո(Ն)ԻԱ «Արտարեա TV2.0» «Թբիլիսյան բակ»-պատմական կապ» նախագծի** շրջանակներում ճարտարապետորեն աչքի ընկնող թբիլիսյան բակերից մեկում անցկացվեց էթնիկ երաժշտության երեկո, որին մասնակցեցին Թբիլիսիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:
- ❖ **Ո(Ն)ԻԱ «Կանանց իրավունքների համայնքային նախաձեռնություն» «Վրաստանի քուրդ-եզիդների մշակութային ժառանգություն» նախագծի** շրջանակներում քուրդ-եզիդ նկարիչների և ավանդական արվեստի վարպետների աշխատանքների ցուցահանդես կազմակերպվեց Թբիլիսիում, Բաթումում և Թելավում, հնչեցին վրաց-եզիդական հանգեր,

- եզիդական-ազգային պարեր, տարագ, ազգագրական երգեր, տեղի ունեցավ վրաց-եզիդական ճաշատեսակների շնորհանդես,
- ❖ **Անհատ ձեռներեց Նինո Ճիճինաձե** - «Օրնամենտի (Զարդանախշ)»-նախագծի նպատակն էր Պանկիսի կիրճում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տեքստիլի ուսուցումը: Ստեղծվեց 2 խումբ, յուրաքանչյուր խմբում 10-12 աշակերտ: Դուխի գյուղի արվեստի կենտրոնում կազմակերպվեց ամփոփիչ ցուցահանդես,
  - ❖ **Ո(Ռ)ԲԱ «Աստերոիդ» ստուդիա – Կովկասյան կավճի շրջան»** էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների (Բլիսյի համալսարանի ուսանողներ) մասնակցությամբ կայացավ համերգ-ներկայացում «Կովկասյան կավճի շրջան» ,
  - ❖ **Ո(Ռ)ԲԱ «Կոնտակտ» - Ստեղծագործական կրթական դասընթացներ Վրաստանի տարածաշրջաններում»** - նախագծի նպատակն էր տարածաշրջաններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար մեկամսյա ստեղծագործական-կրթական դասընթացների կազմակերպումը: Ձևավորվեց 2 խումբ (I խումբ՝ V դասարանից VIII դասարանը ներառյալ սովորողներ, II խումբ՝ IX-դասարանից XI դասարանը ներառյալ): Առաջին խմբի աշակերտներն աշխատեցին գրքի «Վրաստանի ժամանակակից պատմությունների պատկերազարդ ժողովածուի» վիզուալացման վրա, իսկ երկրորդ խմբի աշակերտները՝ ամենամսյա ժուռնալի հրատարակության վրա,
  - ❖ **Ո(Ռ)ԲԱ «Վրաստանի մշակույթի ակադեմիա» - էթնոբազմազանության ավանդույթներ և գեղարվեստական տրանսֆորմացիա»** նախագիծը նախատեսում է Վրաստանում բնակվող տարբեր էթնիկ խմբերի մշակույթի աչքի ընկնող տարրերի դեկորատիվ-գեղագիտական աշխատանքների, պարագաների, ներքին հարդարանքի տարրերի, հուշանվերների ստեղծումը և դրանց ցուցահանդեսը Թբիլիսիում, Բակուրիանում, Քարելում, Ախալցխեում և Բորջոմում: Վրաստանի կոմպոզիտորների միության շենքում ցուցահանդեսի հետ միասին տեղի ունեցավ ազգագրական համերգ, հրատարակվեց կատալոգ/բուկլետ:
  - ❖ **Ասորացի երիտասարդական միություն «Նինեվիա» - «Հնագույն ասորական ավանդույթներ»** - կազմակերպվեց ասորական լեզվի երեկո: Ներկայացված էին ասորական ավանդական ճաշատեսակներ, հագուստներ, ինչպես նաև ասորական նկարիչ-դիզայներ Ռիտա Էլդանայի ցուցահանդեսը:
  - ❖ **Ո(Ռ)ԲԱ «Կովկասյան խճանկար» - «Խաղաղության հղումներ Նիքոզիայից»** - Նախագծի նպատակն էր բաժանման գծի մոտ գտնվող գյուղերի բնակիչների համար ցուցահանդեսի կազմակերպումը, մշակութային միջոցառման անցկացումը վրացի և օս արվեստագետների մասնակցությամբ, կազմակերպվեց վրաց-օսական ճաշատեսակների համատեսում,
  - ❖ **ՀԻԻԱ Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանի «Ադրբեջանական ձեռքի աշխատանք գորգագործության ավանդույթի պահպանում»** նախագծի շրջանակներում կազմակերպվեց ցուցահանդես,



- ❖ Տպագրվեց «Ավարական հեքիաթներ» գիրքը, որտեղ ներկայացված են ավարների ավանդույթները և էթնոմշակույթը,
- ❖ Իրականացվեց «Բազմերանգ Վրաստան» նախագիծը, որի նպատակն էր էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում իրականացնել մշակութային-կրթական միջոցառումներ: Միջոցառումներ անցկացվեցին Բոլնիսում, Մառնեուլիում, Ախալցխիում, Ախալքալաքում, Գարդաբանում, Պանկիսում: Իրականացված միջոցառումների շրջանակներում կազմակերպվեցին Նիկոլոզ Բարաթաշվիլին և Իլիա Ճավճավաձեին նվիրված դասախոսական դասընթացներ, ժամանակակից և ազգագրական երաժշտության երեկոներ, հանդիպումներ գրողների և հրատարակիչների հետ, նախարարության աջակցությամբ հրատարակված հոբելյանական ժողովածուների և թարգմանությունների շնորհանդեսներ, Ադրբեջանից և Հայաստանից ժամանած նկարիչների և ֆոտո-արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսներ, վերջին ժամանակների լավագույն գեղարվեստական և անիմացիոն ֆիլմերի ցուցադրումներ: Հատկանշական է, որ նախագծի շրջանակներում 2017 թվականի մայիսի 15-ին և 16-ին ք. Ախալցխիում և Վարձիայում իրականացվեցին Շոթա Ռուսթավելիի 800-ամյակին նվիրված միջոցառումներ, որոնց մասնակցություն ունեցան հայտնի ռուսովելագետներ, գիտնականներ և արվեստագետներ: Միջոցառումներին մասնակցեց շուրջ 3500 երիտասարդ:
- ❖ Պանկիսի ժողովրդական տոնին նվիրված միջոցառմանը մասնակցեց ՀԻԲ երգի և պարի պետական ակադեմիական «Էրիսիոնի» համույթը, կազմակերպվեց ձեռքի աշխատանքների ցուցահանդես:
- ❖ ՀԻԲԱ «Ստվերների պետական թատրոն՝ Բուդրուգանա Աբխազերի» Ախմետայի շրջանի Դուխի գյուղի Մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ «Տարվա չորս եղանակները» ներկայացումը,
  - 2017 թվականին նախարարության կողմից պատրաստվեց և հրատարակվեց Գուրամ Բաթիաշվիլիի «Դեմքեր և իրավիճակներ» գիրքը, որը գրողի կողմից թատերական գործիչների ստեղծագործության, անցած կամ ընթացիկ թատերական գործընթացների արտացոլումն էր,
  - Պատրաստվեց և հրատարակվեց հայտնի հայ նկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիկովի գործունեությունն արտացոլող ալբոմ «Բաժբեուկի քարիզմա» վերնագրով,
  - ՀԻԲԱ թատրոնի, երաժշտության, կինոյի և պարարվեստի թանգարանի կողմից հրատարակվեց «Բազմամշակութային Թբիլիսիի խորհրդանիշ՝ Կոկա Իզնատով» ալբոմը,
  - Հրատարակվեց «Գործվածքներ Վրաստանից» ալբոմը, որը կապված է վրացական գործվածքի, հագուստի էսթետիկ արժեքների, տարբեր մշակույթների

ագդեցությունների և բազմամշակութային տարածությունում կենցաղային և  
ստեղծագործական մշակույթի զարգացման հետը: